№ 208 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 208

Տարեկան գինը 10 րուբլի· կէս տարվանը 6 րուբլի·
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը·

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)·

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ·

Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 րուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Երթեւեկ հիւանդների համար ամեն օր, Վոկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի

Տելէֆօն 695

Ն. Գ. ՖԵԴՈՐՈՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, $8^1/_2$-ից մինչև $9^1/_2$, Ներքին հիւանդ.։
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, Ներքին և երեխաների։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱՆԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., Ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, $11^1/_2$-ից մինչև $12^1/_2$ ժ., սիֆիլիս եւ կաշուէ հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, Ներքին և երեխաների, 2—3 ժամը։
Վ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—$2^1/_2$ ժ., աչքի հիւանդ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐՋՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., Ներքին և երեխաների։
Ն. Գ. ՉԻՉԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., Ներքին և երեխաների։

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։

(օ. մ.) տ. 38. 100—94

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆԳԱՏԻ ԱՌԻԹՈՎ

II

Մենք գանգատվում ենք, որ մարդիկ չունենք մեր ընթացիկ գործերը կատարելու համար, բայց միևնոյն ժամանակ պէտք է արձանագրենք հետևեալը։

Երբ երկու տարի սրանից առաջ պէտք զգացվեց Էջմիածնի կալուածների բարեկարգութեան խնդիրը քննելու և մշակելու, կարճ միջոցում Թիֆլիսում կազմվեց մի յանձնաժողով, որը հանդէս բերեց մանրամասն խորհրդածութիւններ և ուրուագծեց գործունէութեան մի ծրագիր Էջմիածնի գործողների համար։

Մի ուրիշ օրինակ.

Եկեղեցական կալուածքները վերադարձնելուց յետոյ կազմվեց մի յատուկ յանձնաժողով, որը զբաղվեց դպրոցական կազմակերպութեան խնդրով և մշակեց մի ծրագիր, որը, չը նայելով իր մի քանի թերութիւններին, ներկայանում է իբրև մի բաւական պատկառելի աշխատանք։

Նոյն իսկ նորերս, Վեհափառ Իզմիրլեանի Կովկաս ժամանելուց յետոյ, երբ հարկաւոր եղաւ ժամանակաւոր հրահանգ մշակել դպրոցական գործի մասին, հնարաւոր եղաւ կարճ միջոցում ձևակերպել հիմնական ցուցումների ծրագրական մի ուրուագիծ, որը և ուղարկվեց թեմերին ի ղեկավարութիւն։

Առաջ բերենք, իբրև օրինակ, և այն աշխատանքները, որոնք կատարված են պարզելու Էջմիածնի հողերի ոռոգման խնդիրը։ Շնորհիւ մասնագիտական ոյժերի մասնակցութեան և դրամական միջոցների ներկայութեան, երկրագործական բարւոքումների խնդիրը Էջմիածնի հողերում կարող է համարվել բաւական արդէն լուսաբանված և դրված իրագործութեան ճանապարհի վրա։

Կարող էինք մատնացոյց լինել և մի երևոյթի վրա, որը բնորոշ է իր արտայայտութեան եղանակով։ Մեր խօսքը դասագրքեր կազմելու մասին է։ Մի չորս տարի սրանից առաջ, երբ դպրոցների դռները նորից բացվեցին մատաղ սերնդի առաջ, ընդհանուր գանգատ էր լսվում, որ ձեռնարկներ և դասագրքեր չը կան դպրոցական առարկաներից և ցանկութիւն էր յայտնվում, որ յօրինվեն այդպիսիները· իսկ այժմ մենք տեսնում ենք, որ գրավաճառական շուկան դասագրքակոխ է եղել բազմատեսակ գրքերով, որոնց մէջ թէև շատ կան թերութիւններ, բայց և կան արժանաւոր գործեր։

Մեր բերած օրինակները ցոյց են տալիս, որ, չը նայելով եղած պակասութիւններին, այնուամենայնիւ կեանքի պահանջի ազդեցութեան տակ հանդէս են եկել թէ համախմբումների կատարած և թէ եզակի ջանքերով իրագործված աշխատանքներ, որոնք կարողացել են բաւարարութիւն տալ այդ պահանջին։

Այդ օրինակները ցոյց են տալիս, որ եթէ մենք կարողանայինք ժողովել մեր կուլտուրական ցիրուցան ոյժերը և օգտվել մարդկանց ընդունակութիւններից և գիտութիւնից, կարող էինք մեծապէս նպաստել այն խնդիրների լուծման, որոնք իբրև հերթական գործեր կանգնած են մեր առաջ և պահանջում են անմիջական ուշադրութիւն գործնական նպատակներ առաջացնելու համար։

Ա. Քալանթար

ՕԾՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Էջմիածին, 20 սեպտեմբերի

Այսօր, առաւօտեան, մասնաժողովը, որի կազմից պակասել էր Հ. Առաքելեանը, ներկայացաւ Վեհ. Կաթողիկոսին և զեկուցեց իր կատարած աշխատութիւնների մասին։

Մասնաժողովը յայտնեց, որ, ժամանակի սղութեան պատճառով և ի նկատի ունենալով որ աշխարհական անդամներից մի քանիսն ևս անկարող են մնալ, նա հնարաւորութիւն ունեցաւ զբաղվել գլխաւորապէս երեք հարցով, այն է՝ 1) կաթողիկոսական Դիւանի կազմութեան, 2) Էջմիածնի միաբանութեան որոշ կանոնադրութիւն ունենալու անհրաժեշտութեան և 3) եկեղեցական կալուածների կառավարութեան հարցերով։ Դիւանի խնդիրն արդէն կարգաւորված է։ Գալով միաբանութեան, անհրաժեշտ է որ Էջմիածնի միաբանութիւնը ունենայ որոշ կանոնադրութիւն։ Այդ մասին պէտք է լինի միաբանութեան ընդհանուր ժողով, որ մշակէ կանոնադրութիւն և ներկայացնէ Կաթողիկոսին ի հաստատութիւն։ Կալուածների կառավարութեան վերաբերմամբ մասնաժողովը նոյնպէս մշակել է մի քանի կանոններ։

Մնացած հարցերի վերաբերմամբ մասնաժողովն այն կարծիքը յայտնեց, որ հարցերը լուրջ լինելով, անհրաժեշտ է աւելի մանրամասն ուսումնասիրութիւն։ Կաթողիկոսը ցանկութիւն յայտնեց, որ մասնաժողովի մնացող անդամները շարունակեն զբաղվել նիւթերի մշակութեամբ։ Հաւանական է, որ ուրիշ անձինք ևս մտնեն մասնաժողովի կազմի մէջ։ Այսօր հեռանալու են Վասիլ Եղիազարեան, Գ. Եւանգուլեան և Յ. Սաղաթելեան։

—

Կաթողիկոսական անդրանիկ կոնդակը որոշված էր հրատարակել օծման օրը, բայց, դժբաղդաբար, անկարելի էր եղել պատրաստել, որովհետև կոնդակը գրվում է մագաղաթի վրա, հայկական հին նշանագրերով և զարդանկարներով, որոնց տպագրութիւնը Թիֆլիսում գունաւոր ձևով անկարելի է եղել։ Այդ կոնդակի նկարների համար Թիֆլիսից յատկապէս հրաւիրված է նկարիչ Պօլտարացկին, որ շարունակ աշխատում է։ Վերջանալուց յետոյ՝ տպագրութիւնը պէտք է կատարվի Պետերբուրգում։ Հաւանական է, որ կոնդակը հրատարակվի մի ամսից յետոյ։ X.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 21 սեպտեմբերի

Ռուս ժողովրդի միութիւնը Եալտայից Բուլացելից տեղեկութիւն ստացաւ, որ այն ջանքերը, որոնք ուղղված էին Դուբրովինին ընդունել տալու Թագաւոր Կայսրի մօտ, վերջացան անաջողութեամբ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 21 սեպտեմբերի

Թագաւոր Կայսրը Լիվադիայից հեռագրով՝ Բարձրագոյնս հրամայել բարեհաճեց շնորհել Շչեգլովի դաշնակցութեան գործի համար բոլոր մահվան դատապարտվածների կեանքը։ (Հ. Գ.)

—

Բերլին, 21 սեպտեմբերի

«Русское Слово»-ի Խարբինի թղթակցի հեռագիրը, գերմանական հիւպատոս Բաումիլլերի վարմունքի առիթով, մի ամբողջ փոթորիկ է բարձրացրել գերմանական մամուլի մէջ։ Մամուլը արդարացնում է հիւպատոսին· նրա տոնը խիստ է և գրգռիչ։ Լրագիրները պահանջում են, որպէսզի գերմանական կառավարութիւնը ցոյց տայ Ռուսաստանին հարկաւոր տեղը և բացատրէ, որ Մանջուրիան այլ ևս ռուսական սեփականութիւն չէ։ («Б.»)

—

Սօֆիա, 21 սեպտեմբերի

Մինիստրները մեկնեցին Տիրնովօ, ուր վաղը տեղի կունենայ Բօլգարիայի անկախութեան առաջին տարեդարձի տօնակատարութիւնը։ Թագաւորը, որ գիշերս եկաւ արտասահմանից, կը դիմէ ուղղակի Տիրնովօ, ուր նրա հասնելու ժամանակ կը գան Թագուհին, գահաժառանգները և ժառանգուհիները, որոնք ներկայումս գտնվում են Վառնայում։ (Հ. Գ.)

—

Մելիլիա, 21 սեպտեմբերի

Լիկսա լեռան վրա նկատվեցին 1500 մաւրեր։ Կարծում են, որ բիմբուրնագէլ ցեղի բազմամարդ տեղերը օժանդակ օգնութիւններ են ուղարկել մաւրերին։

Երէկ ամբողջ առաւօտը և ցերեկը արտիլերիան ցրում էր Լիկսա լեռան վրա խռնված մաւրերի գումարտակները։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 21 սեպտեմբերի

Թագաւորին զեկուցում տալուց յետոյ, Մաուրան յայտնեց, որ կառավարութիւնը ցանկանում է որքան կարելի է շուտով վերջացնել Մարոկկօյում սկսած արշաւանքը և կուղարկէ այնտեղ բոլոր հարկաւոր օգնութիւնները, որպէսզի իր նպատակին հասնէ։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 21 սեպտեմբերի

Երէկ երեկոյեան Մելիլիա մեկնեց Դօն-Կարլօս Բուրբօնսկին։ (Հ. Գ.)

—

Էջմիածնի վերջին դէպքերի մասին «Кавказъ» թերթի թղթակիցը հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում.

«Էջմիածնի սինօդի որոշմամբ Իզմիրլեան արքեպիսկոպոսը, ամենահպատակութեան երդում տալուց և օծումն ստանալուց յետոյ, յայտարարված է Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագոյն Պատրիարք, որի պատճառով սինօդի կարգադրութեամբ դադարում է Կաթողիկոսի տեղապահի գործունէութիւնը և նախկին տեղապահ Գէորգ արքեպ. Սուրէնեանը ներկայ կը լինի սինօդի նիստերին սոսկ իբրև անդամ։

«Այդպիսով Կաթողիկոսը ներկայումս ինքնուրոյն կերպով իր կարգադրութիւններն է անում։ Այդ կարգադրութիւններից մինն էլ իր դիւանապետի պաշտօնը մի անձով կառավարելուն վերջ դնելն է։ Այդ առիթով նա հրամայեց ժողովել միաբանութեան և 8 թեկնածուներ ընտրել իր դիւանատունը կառավարելու համար։ Այս փաստը նշանաւոր է նրանով, որ հանգուցեալ Խրիմեան Կաթողիկոսի ժամանակ նրա անձնական քարտուղարը, որ ինքնագլուխ կերպով վարում էր բոլոր գործերը, օգտվելով Հայրիկի վստահութիւնից, յաճախ ի չարն էր գործ դնում այդ վստահութիւնը, ստորագրել տալով նրան մէկը միւսի ետևից իրար հակասող կոնդակներ, որպիսի հանգամանքը կործանարար ազդեցութիւն արաւ գործերի ընթացքի վրա։ Իր այս նոր կարգադրութեամբ Կաթողիկոսը վերացրեց այդօրինակ զանցառութիւնները։

«Էջմիածնի միաբանութիւնը, Կաթողիկոսի կարգադրութեամբ, ընտրեց 8 հոգու, որոնք արժանաւոր են համարվում վարելու նրա դիւանատան գործերը։ Կաթողիկոսն ընտրեց չորսին, որոնց և առաջարկեց ստանձնել իրանց պարտականութիւնները։ Այս 4 վարդապետները բարձրագոյն կրթութիւն են ստացել մասամբ Ռուսաստանում, մասամբ էլ արտասահմանում։ Նրանք մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԱՆԵԱՆ ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ

Ա.

Թիւրքիոյ հայերը վաղուց սկսած են հիւրասիրել ռուսահայ հռչակաւոր գրողները· անդրանիկներէն մէկն է եղած Պատկանեան տէր-Գաբրիէլ, որ 1871-ին Մ. Մամուրեանի «Արևել. Մամուլի» մէջ կը հրատարակէր քերթողական դիւցազներգութիւնները։ Թերթերու՝ մանաւանդ հին թերթերու մէջ, գրական պատառիկները՝ հայրենի աւերակներու աստիճան գուրգուրալի են, և դժբաղդաբար շատերուն անոնք անծանօթ կը մնան։ Համակրելի մատենագիր Լէօ զայն անցողակի կը յիշատակէ «Ռուսահայոց գրականութեան» մէջ։ Չեմ գիտեր թէ հմուտ հեղինակին ծանօթ էին Զմիւռնիոյ հայ ամսագրին մէջ Պատկանեանի գրութիւնները։ Անոնք սակայն անծանօթ մնալու չեն, և այդ պատճառաւ յօդուածիս նիւթ կընեմ զանոնք։

*

Թիւրքահայ գրական գործիչ Մ. Մամուրեան իր աշխատակից տէր-Գաբրիէլ Պատկանեանի Վահագն դիւցազներգութիւնը հրատարակելու առթիւ կը գրէր սա տողերը.

«Մեծանուն քերթողին անունն ու սքանչելի երկերն արդէն ամեն հայ բանասէրներու ծանօթ են։ Նոր Գողթան երգիչը, Նոր-Հայաստանի վիպասանը՝ թէև հնոյն աւերակաց մէջ նստած կերգէ, իր խանդոտ ամեն հայու սիրտ կը վառէ, կը զմայլէ, և իր աննման, անուշ, զգայուն և ներդաշնակ քնարով մեզ ուրիշ աշխարհ մը, մեր հայոց սրբավայրը կը տանի և անդ կը բանայ մեր առջև Հայկայ սերնդին հետևելիք արահետը»։

Միևնոյն թուականին՝ որ ըսել է 1871-ին, Թիւրքահայ մամուլէն Վահագն վերնագրով երկու դիւցազներգութիւն լոյս կը տեսնեն. մէկը կը գրէր տէր-Գաբրիէլ Պատկանեան, իսկ միւսը՝ Հ. Ալիշանի աշակերտ բանաստեղծ Մկրտիչ Աճէմեան։

Պատկանեան Ոդիսականի հելլէն փափկութիւնը կարձագանգէր և Աճէմեան Արիոստոյի, Օրլանտոյի խրոխտութիւնը կը գանգինէր։ Հ. Ալիշանի աշակերտը՝ թէև թոյլ ու անյաջող դիւցազներգութիւն մը կը փորձէր, և սակայն ունի ինչ-ինչ հոյակապ էջեր, որոնց վրայ գրածներս գուցէ անորոշ օր մը լոյս կը տեսնեն։

Այժմ իմ նպատակս է Պատկանեանի «Վահագնը» ծանօթացնել։

*

Հնդկական երգի պատառիկ մը ունինք Մ. Խորենացիի պատմութեան մէջ՝ Վահագնի ընծայուած. այն պերճանոյշ երգով Պատկանեան կը սկսի երգել Վահագնի առաւօտը։

Հին քաղաքներու հոյակապ աւերակները՝ երբեմն նկարներու մէջ ամբողջացած շէնքը կը ցուցադրեն· ու կը մտածես, թէ ժամանակին անոնք ինչ հիանալի շէնքեր էին· Պատկանեան նման ամբողջացուցիչ գործ մը կը կատարէ, այդ հնդկական երգը իր քնարովը կամբողջացնէ։

Առաւօտը կուզէս պատկերել երևակայութեանդ մէջ. մտածէ բիւրաշող բոցերու մէջէն հրավառ բորբոքեալ պատանեակի մը վազքը· և Արուսեակ կը սկսի լալ.

«Ցնդեալ Արուսեակ ի ցօղ արտասուաց,
Աստղաբոյլ պարուց զիւր կական յօդեաց.
Զի՞ սուրաս, խարտեաշ գուռդ պատանի,
Զի՞ ճեպես, վաղես՝ հանգոյն փայլականց»։

Առաւօտ է, տեսարանը հովուերգական, քնարը իր անոյշ երգը կը մեղեդէ։

«Թափեցէն զքուն հարսունք անդէորդք,
Գիշերավարիդ տքնութեան հացորդք,
Լուցցեն զլապտերս յանազօտ աստերս
Ցոր ճրագալոյց խայտան բիւրաւորք»։

Զարունի յերկունս է. փանդեռնահարը Երասխայ ափունքը նստած կերգէ և կը հրճուի· կերգէ երկունքը երկնի, երկրի և ծովու «Յերգ առնուլ ընտէի ի սէր տան Հայկայ»։ Հայաստան երկունքի մէջ է, առաւօտեան երգերով կը խայտայ հայկական հողը։

Պատկանեանի Առաւօտը կաղապարուած է Գողթան գուսաններու սրինգով. անոնց ներդաշնակ կրկնութիւնը, անոնց կտրուկ պատմական չքնաղ ոճին ուզեր է նման բան մը երգել քաղցրալեզու Պատկանեանը։

*

Տեսիլքը երևակայութեան պատկերահանութիւնն է։ Մտածէ. քանի հիանալի է քերթողին տեսիլքը, մանաւանդ երբ քնարահարը ունի երևակայութիւն վառ, շողշող և բնական։ Պատկանեան կերգէ քերթողին աներջանքը Տեսիլ երգաբանի· անոր երազներուն կուզես մասնակից ըլլալ։

Պարտէզներու պարիկ յաւերժահարսը նստած՝ որթատունկի բարունակին վրայ, ճօճ տարուբեր կօրօրուի, կերգէ մեղմագին։ Եւ քերթողը Հայաստանի երկունքը երգելու համար՝ մուսան օգնութեան կը կանչէ՝. բնութեան պատկերը գեղեցիկ երազ մըն է, սակայն ինքը Արմաւիր կուզէ երթալ, հոն կը փնտռէ մեր փառքերուն օրօրանը։

Ամեն ազգաց մէջ հսկաներու, գերբնական ուժի և քաջութեան տէր դիւցազներու ծնունդը՝ ունի իր առասպելական պատմութիւնը։ Մեր Վահագնի ծնունդն ալ ունի քերթողական ծագումի աւանդական պատմութիւնը, զոր Պատկանեան կը դիւցազներգէ Ծնունդ Վահագնի քերթուածովը։ Մեր դիւցազնական պատմութիւնը միշտ մասն է ունեցած արծիւի, վիշապի, անգղի, բազէի և այլ թռչնոց հետ· Պատկանեանի ծանօթ է այս, և ըստ այսմ կերգէ.

«Արծուէն հոյաթև ծագ յԱզատ Մասեաց,
Օդաճեպ ի թռիչս լողայր վերնասլաց,
Անյագ, անխոնջ յառէր մերթ ի ծով
Որ զարփիափայլ մանուկն երկնեաց»։

Մերթ դէպ ի Արմաւիր կուղղէ իր աչուըները, այն դարպասին մէջ առաջին կանչը կը լսեցնէ. հոն Արամ ծնած ու սնած էր, Արայ սիրուած, Անուշաւան զրուցեալ. հոն Պարէտ վերականգնած էր Հայկայ գահը, հոնկէ Զարմայր արշաւած. այնտեղն էր Պարոյրին արքենի դարպասը, հոն Հրաչեայ խմբած էր իր հարսանեաց պարը. Տիգրան հոն կը վարէր իր թագաւորութիւնը, ան հոն Մասեաց քաջերուն ձօնեց իր անդրանիկ որդին՝ Վահագնը։ Եւ քաջերը, որ հայկազն փառքերու բարձրի հիմերն էին դրած, Վահագնի պաշտպանը կըլլային։

«Արծուէն ի ծագաց Արարատ լերին
Լսելի արար զիւր ճչիւն ուժգին,
Եւ սաւառնացեալ զօդ պատառելով,
Հանգեաւ ի տանիս յերդ անդ դարպասին։
Մինչ այս ամենայն կատարէր տակաւ,
Տիկնայք արամեան շուրջ գՁարուհեաւ,
Զիւղ և մեղր խառնեալ ընդ նաշհոյ ալեր,
Զանգէին ջամբել խիւս մանկան սակաւ»։

Թագաւորին քոյր Տիգրանուհին ու Վարդգեսի տիկինը՝ կառնեն նորածին մանուկը, մօրը անկողնին մօտ՝ օրօրոցին մէջ կը դնեն ու կը սկսին զննել մանկիկին թաթիկները և քաղցրատեսիլ երեսները. հրճուելով կը զմայլէին։

«Եւ ահա ցին մի խոյացեալ յերդոյն,
Կալաւ ճիրանօք զաջ արքայորդւոյն.
Եւ ի խուճապել տիկնանց մեծունեաց,
Գտաւ ցինն ի ճանկս Մասեաց արծուոյն։
Թռչունք ամենիք կռուեալ սաստկագին,
Յայնմիկ տագնապի մի-մի ձու ածին.
Զորս նորածին իւր մանրիկ թաթովք
Ծմլեաց և եղեղ յիւր օրօրոցին։
Զայս ամենայն անցս ետես և Տիգրան
Եւ օրինադրեաց յաշխարհ հայրենեան,
Զի ի յիշատակ զեղման այս ձուոց,
Զուազեղ մատչիցի յօր ծննդական»։

Պարզ քնարերգութիւն է այս. ականատես կըլլաս ու կիմանաս, թէ ինչպէս կը ծնի Հայաստանի դիւցազը. մանկիկ քաջածնունդը իր թաթիկներով կը ճզմէ կռուարար թռչուններու ձուերը. դա յաղթանակի նշան է։

Կը տեսնես օրօրոցի այդ քաջախիզախ մանկիկը, կուզես հետաքրքրուիլ թէ ինչպէս կը զարգանայ ան։ Պատկանեան Մանկութիւն Վահագնի դիւցազներգութեան հեղինակութիւն են վայելում ինչպէս միաբանութեան, այնպէս և ժողովրդի մէջ։ Կօլլէգիայի նախագահ և անձնական քարտուղար նշանակված է սինօդի անդամ Յուսիկ վարդապետը, իսկ անդամներ՝ Խորէն վարդ. Մուրադբէգեան, Մեսրոպ վարդ. Տէր-Մովսէսեան և Գարեգին վարդ. Յովսէփեան»։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 2 սեպտեմբերի

Դպրոցական խնդիրը բաւական բարդ կերպարանք ստացաւ։ Գրել եմ ժամանակին, որ Թաղական խորհուրդները տարեշրջանի ըսկզբում խորհրդակցական ժողովներ գումարելիս՝ որոշել էին դպրոցներում պաշտօններ չը տալ մի քանի նոր-սերնդական ճանաչված ուսուցիչների, որոնք մօտիկ անցեալում յայտնի արշաւանքներ էին գործել եկեղեցու դէմ և խօսել բարոյականութեան և ընտանեկան սրբութիւնների դէմ։

Այդ պատճառով ահա ծայր տուեց պատերազմը «աղա-Թաղականների» դէմ։ Տեսնելով որ սպառնալիքները նպատակի չեն հասնում, սկսեցին Թռուցիկ յայտարարութիւններով իբր թէ ժողովրդի միջոցը պատրաստել դպրոցական անբարեկարգութիւնների դէմ և բողոքել «հաստագլուխ, հաստավիզ Թաղականների», «հնացած, փտացած» տեսուչների և ուսուցիչների դէմ. այս մտքով էլ հանրագրութիւններ ներկայացրին քաղ. ժողովին և յանդգնեցին մինչև անգամ մի օր էլ փակել քաղաքամէջի ուսումնարանները, թէև հանրագիր ստորագրողների և բողոքողների շրջաններում չը կային երբէք աշակերտների ծնողներ, այլ 15—20 տարեկան պատանիներ։

Բայց այս իրարանցումներն աննպատակ անցան. դպրոցները շարունակում են իրանց նորմալ ընթացքը, իսկ բողոքները դատապարտվեցին միալ «ձայն բարբառոյ յանապատի». միայն թէ քաղաք. ժողովը գոհացում տալու համար եղած բողոքներին՝ կազմեց մի ուսումնական խորհուրդ, որ պիտի քննէ ուսուցիչներին և վկայականներ տայ չունեցողներին։

Աւելի բարդութիւններ առաջ եկան Կենտրօնական վարժարանի շուրջ. նորընտիր տեսուչ պարոն Բոյաջեան, որը Կ. Պօլսի Կենտրօն. վարժարանի ուսուցիչներից է և որի համար լաւ վկայութիւն տուեց պատրիարքարանը, դեռ չը հասաւ. բայց մի-երկու ուսուցիչներ, որոնց՝ խնամակալութիւնը համարել էր անպէտք և պաշտօնի չէր կոչել, նորից աղմուկ բարձրացրին, Թռուցիկ յայտարարութիւններ բաց Թողին, սպառնալիքներ խնամակալութեան անդամներին, որոնց մէկի տան պատուհաններն էլ գնդակահարելով՝ ահաբեկեցին նրան, որը պարտաւորվեց հրաժարվել։ Նրանք այժմ բռնութեամբ պաշտօնավարում են, իրանց մէջը տալով Թայֆայական որոշ շրջանի մարդկանց։ Այսպիսի քաօսային դրութեան մէջ չենք իմանում ինչ օգտակարութիւն պիտի ունենայ նորեկ տեսուչը, որ կը հասնի մի-երկու օրից։

Առաջնորդ. տեղապահ Զաւէն վարդապետ մի նամակ է գրում Կահիրէ բնակվող մի բարեկամի, և խորհրդաբար իր դարդերը բաց է անում և գրում այն բռնութեան լուծի դէմ, որը յանուն յեղափոխութեան դրվել է ժողովրդի շլինքին. նա յայտնում է, որ վանքերը կողոպտված, մերկացած են իրանց սրբութիւններից, Աղթամարի վանքը դարձել է Թռչունների բոյն, և այն եկեղեցին, որ տոկացել է դարերի բռնութիւններին, այժմ քայքայվում է հայորդիների ձեռքով. իսկ հայ ընտանեկան սրբութիւնը, հայ կուսի պատիւը, որոնք անաղարտ են մնացել, հակառակ կրած բռնաբարումներին, այժմ ընկնում են ներքին բռնաւորների ձեռքով։ Այնչափ սրտաշարժ է այդ նամակը և այնչափ լաւ է բաց անում մեր վէրքերը, որ նրա բարեկամը կարևոր է համարում այդ նամակը հրատարակութեան տալ Կ. Պօլսի «Հայրենիք» Թերթում։

Այդ նամակը, որ ճշմարտութիւնը մատնանշում է, դուր չէ գալիս նրանց, որոնք ջատագովում են խօսքի ու մամուլի ազատութիւնը, որոնք պարծենում են, որ իրանք են բերել ազատութիւնը Թիւրքիայում, ուստի սպառնալիք են ուղարկում վարդապետին և հրամայում, որ փութայ անմիջապէս քաշվել գործից և մինչև տասն օրում հեռանալ քաղաքից, եթէ ոչ տուժելու է իր կեանքով։ Ի՞նչ կասէք ազատութեան, լոյսի այս առաքեալներին, որոնք ազատ խօսքի, մամուլի բերանը պրկել են ուզում, որոնք վախենում են լոյսից։ Զաւէն վարդապետ անյողդողդ է մնում, շարունակում է իր պաշտօնը և, ի պատասխանի նրանց գրաւոր զեկոյցին, յայտնել է, որ չէ վախենում նրանց վատ գնդակներից և թէ պատրաստ է զոհվել ճշմարտութեան։ Կասկածվում է նոր կնճռոտութիւններից և անհամութիւններից։ Զաւէն վարդապետ արդէն ընտրվել է Դիարբեքիրի առաջնորդ և մօտ օրից կը հեռանայ։

Վանի համար էլ նշանակվել է առաջնորդական ընտրութիւն. գաւառական ժողովը քանիցս հրաւիրվեց առաջնորդ. ընտրութիւն կատարելու, բայց ժողովը, մեծամասնութիւն չունենալով, անհետևանք մնաց։ Չեն կարող գտնել յարմար առաջնորդացու հոգևորական, և եթէ գտնվի էլ. դժուար թէ յանձն առնէ Վանի առաջնորդ. պաշտօնը, որ լիքն է փշերով և ուր չը կայ բեմի, խօսքի ազատութիւն. իսկ նա, ով խօսում է ճշմարտութիւնը, կը տուժէ իր պատւով, անունով և մինչև իսկ կեանքով։ Իսկ գտնել մի փալաս առաջնորդ, որ. համակերպվի ամեն կեղծութիւններին և ունենայ միակ արժանիք՝ լսել, չը տեսնել,—չը գիտենք կաջողվի՞ արդեօք։

Նամակս գրելուց յետոյ իմանում ենք, որ նախընթաց գիշերը Կենտրօնական վարժարանի խնամակալութեան անդամներից Երամեանի տունն էլ գնդակահարվել է, կինը և աղան մազապուր ազատվել են։ Սրան էլ՝ նոյն խնամակալութեան անդամներից Գելեմեանի պէս՝ առաջուց ազդարարութիւն եղել էր հրաժարվելու։

Մարակ

42 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

42 ր. 50 կոպ…

Ի՞նչ է դա, հանա՞ք, ծաղր թէ՞ ամբողջ ազգային սնանկութիւն։

Երեք երկար ամիսներ «Մշակի» խմբագրատան մէջ մնում են մի քանի հարիւր օրինակներ «Հայի կտոր զէյթունցուն» ժողովածուից։ Բոլորս գիտենք բարձր, վսեմ նպատակը, բոլորս գիտենք և սակայն բարեգործ, կարեկից Թիֆլիսցիները երեք ամսվայ ընթացքում տալիս են միայն… 42 ր. 50 կ.։

Ոչ, դա հանաք չէ, դա ծաղր էլ չէ. դա միայն մեր բարոյական ոչնչութիւնը, բարոյական սնանկութիւնն է։

Զէյթունցիները ճարահատված են քաղցից։ Կիպրոսում փախստականները կրօնափոխ են լինում, հրաժարվում են մեր կրօնից, մեր ազգից, մեր անցեալից։ Երկրում նրանք ցաւ, արտասուք են միայն տեսել և երբէք չեն տեսել մեր կողմից մխիթարութիւն, կարեկցութիւն…։ Եւ որչափ անմիտ են այն ճռճռան ազգասէրները, որ Թափվում են անէծք նրանց գլուխներին և վրդովվում են, որ զէյթունցին դառնում է կրօնափոխ…։ Կայ յուսահատութիւն, որ չափ ու սահման չունի, յուսահատութիւն, որ նետում է մեզ ջուրը, որը այնքան ուժեղ է, որ նրա առաջ ջուրը խոր չէ, կրակը չէ այրում և կեանքը կորցնում է իր բոլոր արժէքը։ Այդպիսի յուսահատութեան հասել են կարօտեալ հայերը։

Նրանք հացի են կարօտ, և մենք տալիս ենք նրանց քար- ոչ, սխալվում եմ, մեղայ և մեղայ, մենք քարից էլ վատ բան ենք տալիս։

Մենք խօսում ենք…

Բառեր, բառեր և բառեր։

Կա՞ն մեզանում անձնուրաց գործիչներ։ Ո՞ւր են։ Միթէ միայն խօսել գիտենք. ուրեմն ինչո՞ւ զարմանում ենք, որ ազգը կրօնափոխ է լինում։ Ի՞նչ ենք մենք արել այդ ազգի համար։ Ոչինչ։

Այո, կայ յուսահատութիւն, որ չափ, սահման չունի…։ Եւ երբ երեք ամսվայ ընթացքում ամբողջ Թիֆլիսում «Հայի կտոր զէյթունցուն» ժողովածուից վաճառվում է միայն 42 ր. 50 կ., մարդու սիրտը պղտորվում է և մենք կորցնում ենք մեր հաւատը…։ Մինչև ե՞րբ մենք պիտի խնդրենք, աղաչենք, մուրանք ազգի համար։

Այսօր մենք փոխադրեցինք Պօլսի պատրիարքարանը եւ 500 ր.։ Այդ գումարը գոյացած է «Հայի կտոր զէյթունցուն» ժողովածուի արդիւնքից։ Ուրեմն առաջվայ 1000 ր. հաշւելով մենք փոխադրել ենք 1500 ր.։

Այդ գումարը մենք մուրացել ենք Նոր-Նախիջևանում և Րոստովում…։

Գր. Չալխուշեան

Րոստով Դ/վ., 10 սեպտ.

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԻ

Մեր խմբագրութեան մէջ գտնվող եապոնական պատկերներից ծախված է դարձեալ 16 օրինակ, որից գոյացել է 11 ր. 60 կ.։

Այդ նկարներից մինչև այժմ վաճառել ենք 39 օրինակ, որից գոյացել է 22 ր. 80 կոպ.։

ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ

Ստացանք—Իզմայիլից՝ Յակոբ քահ. Պէօրէկճեանից 2 ր., Գր. Չալխուշեանի հրատարակած գրքից մի օրինակ իրան ուղարկելու համար։

Այդ գրքի վաճառումից մինչև օրս մեր խմբագրութեան մէջ հաւաքված է 54 ր. 20 կոպ.։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

1907 Թւի փետրվար ամսին Շուշի քաղաքից 25 վերստ հեռու, պօստային ճանապարհի վրայ, սպանվեց զինւ. տանուտէր Զօլոտարեօվ, որ գնում էր պօստային կառքով։ Այդ դէպքի նախորդ օրը միևնոյն տեղում սպանվեց նաև պահակ Ալէքսանդրօվը. յանցաւորները փախան և ոստիկանութիւնը փաստեր չը կարողացաւ ժողովել, թէ ում ձեռքով են կատարվել այդ սպանութիւնները։ Ոստիկանական պրիստաւ Սադըղ-բէկ Վէզիրօվը զեկուցեց Գանձակի նահանգի այն ժամանակվայ գէներալ-նահանգապետ Բաուէրին, որ յանցաւորները երևան կը հանվեն, եթէ ձերբակալվեն դէպքի տեղին մօտիկ Թուրք գիւղերի պատւաւոր բնակիչներն իրանց ընտանիքների հետ, որ այդ կը ստիպէ ազգաբնակութեանը յանձնել մարդասպաններին։ Այս միջոցը գործադրվեց և Աղդամ գիւղի բանտարկեալների տանը բանտարկվեցին բազմաթիւ անձինք, որոնց թւում, Շուշու նախկին գաւառապետ Գերասիմօվի ցուցմունքով, 33-ը կանայք են։

Գէներալ Բաուէրը, ինչպէս ցոյց է տալիս մեղադրական արձանագրութիւնը, իմանալով որ այդ սպանութիւնները կարող էին կատարել հայերը, բերանացի փետրվարի 8-ին հրամայեց մեղադրող Գերասիմօվին ազատել բանտարկվածներին, յայտնել նրանց, որ նրանք ազատվում են Գերասիմօվի միջնորդութեամբ։ Գէներալ Բաուէրի մեկնելուց երկու օր յետոյ, Գերասիմօվը և նրա օգնական Սպասկին յայտնեցին բանտարկեալներին, որ բոլորը ուղարկվելու են Շուշու բանտը։ Այս տեղեկութիւնը ճնշող տպաւորութիւն Թողեց բանտարկեալների վրա. կանայք և երեխաները սկսեցին լալ, վախենալով երկրից աքսորվելուց, և սկսեցին խնդրել իրանց ազգականներից, որոնք ժողովված էին Աղդամում, ամեն միջոց ձեռք առնել ազատելու իրանց կամ թէ թեթևացնելու նրանց դրութիւնը։

Ազգականները սկսեցին դէս ու դէն ընկնել և իմացան, որ գաւառապետ Գերասիմօվը և նրա օգնական Սպասկին պատրաստ են ազատել բանտարկեալներին, եթէ դրա համար նրանց որոշ գումար տրվի։

Հնարաւորութիւն չունենալով վճարել փրկանքի համար այն գումարը, որ որոշել էին մեղադրող Գերասիմօվը և Սպասկին, ազգականները սկսեցին սակարկել, և խնդրողների ամեն մինի փրկանքի գումարը պակասեցվեց, բոլորն էլ գնացին Աղդամի բազարը և բացարձակապէս սկսեցին «բանտարկեալներին ազատելու» համար փողեր հաւաքել և տալ այդ պաշտօնական անձանց։ «Աճուրդի» բնորոշման համար մեղադրական ակտը յենվում է հետևեալի վրա. Նովրուզլուի 4 բնակիչների համար նրանց ընտանիքներից պահանջում էին 1500 ր., իսկ յետոյ իջան 700 րուբլու, Գիւլափլու գիւղի բնակիչներից 200 ր., համաձայնեցին 50 ր., Ղարադաղլի գիւղի բնակիչներից՝ 500 ր., զիջեցին 250ր., Շէլլու գիւղի բնակիչների հետ վերջացրին 200 րուբլով։

Շուտով, ազատելուց յետոյ, ազգաբնակութիւնը, իմանալով որ բանտարկեալները պէտք է արձակվէին գէներալ Բաուէրի կարգադրութեամբ, յայտնեցին իրանցից ժողովված փողերի մասին Աղդամի զօրախմբի հրամանատար գնդ. Կիսելէվին, որի կարգադրութեամբ կազմվեց մի յայտարարութիւն և յարուցվեց նախնական քննութիւն։

Գործի մէջ տեղեկութիւն կայ, որ մեղադրվող Սպասկին դիմեց մի քանի խիստ միջոցների, օգտվելով իր ծառայական դրութիւնից և ստիպում էր մի բանտարկեալի անունից յայտարարութիւն կազմել, որ «իր վրա բարդված բողոքը կաշառքի մասին Թիւրիմացութեան հետևանք է»։

Քննութեան միջոցին Գերասիմօվը և Սպասկին հերքեցին իրանց մեղաւորութիւնը, որով առաջինը յայտնեց, որ նահանգապետը հրամայեց նրան ազատել բանտարկեալներին Խօջալի կայարանում, սակայն նկատի առնելով որ այդ կայարանում «ազատվածները դժուարութեամբ պէտք է միջոցներ գտնէին տուն վերադառնալու համար», վճռեց իր ռիսկով ազատել կանանց փետրվ. 10-ի երեկոյեան, իսկ տղամարդկանց 11-ի առաւօտեան Աղդամում։ Վերցրե՞լ է արդեօք Սպասկին որևէ փրկանք ազատելու համար, նա չը գիտէ։ Իսկ Սպասկին յայտնեց, որ դրամաշորթութեան մասին վկաների ցուցմունքները սուտ են և յերիւրել են նրա թշնամիները։ Դատարանին էր յանձնված նաև Աղդամի բանտարկեալների տան կառավարիչ Մսերխանովը, որ, ժխտում էր, թէ 10 րուբլի կաշառք է վերցրել Կամբար Քերբալայ Ալեաքպէր-օղլուց. որովհետև բոլորի վրա հսկում էին Սպասկին և Գերասիմօվը, և նա իր պաշտօնից հեռացվեց, աւելացրեց. «Սպասկին յայտնի կաշառակեր էր և կաշառքներ վերցնում էր ազատօրէն»։ Նա՝ Մսերխանովի ներկայութեամբ՝ բանտարկեալներին ազատելու համար նովրուզլուեցիներից վերցրեց 740 րուբլի և ղարադաղլեցիներից 200 րուբլի. բացի դրանից Մուրսալ Իրզա-օղլին յայտնեց նրան, որ Սպասկին իրանից վերցրել է 60 րուբլի. Մաշադի Ահմէդ Քերբալայ Բադըր-օղլին տուել է 200 րուբլի։

Մեղադրեալները յանձնվել էին Թիֆլիսի դատաստանական պալատին, մեղադրվելով դրամաշորթութեան մէջ և ապօրինի կերպով մարդկանց բանտարկելում։

Դատական քննութիւնը, որ սկսված էր Գանձակում դատաստանական պալատի նստաշրջանում, վերջացաւ սեպտ. 17-ի երեկոյեան։

Պալատի դատավճռով Շուշու նախկին գաւառապետ Գերասիմօվը և նրա ստորին օգնական Սպասկին զրկված են բոլոր իրաւունքներից և արտօնութիւններից և յանձնված մի տարով բանտարկութեան։

Մեղադրվող Մսերխանօվն արդար է։

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԻԹՈՎ

(„Баку“ լրագրի հաղորդագրութիւնը)

Րոստովի և Նովօչերկասկի բանտերում գտնվում են բազմաթիւ մարդիկ, որոնք մեղադրվում են «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ։

Բանտարկեալների դրութիւնը չափազանց ծանր է, բանտային ըէժիմը խիստ է, տեսակցութեան Թոյլտւութիւն ստացվում է մեծամեծ դժուարութեամբ։

Ամեն մի տեսնվելու համար ստացվում է դատական քննիչի Թոյլտւութիւնը, իսկ քննիչը ապրում է Նովօչերկասկում, մինչդեռ բանտարկեալները գտնվում են Րոստովի բանտում։ Նրանցից շատերի կանայք և երեխաներ եկել են Րոստով Անդրկովկասի զանազան տեղերից և յաճախ ծախսում են իրանց վերջին կոպէկները Նովօչերկասկ գնալու և Թոյլտւութիւն ստանալու համար։ Ինքը քննիչը ոչ ոքի չէ ընդունում և բոլոր բանակցութիւնները տեղի են ունենում գրաւոր կերպով, քաղաքապահ ոստիկանի միջոցով կամ պօստով։ Ի միջի այլոց ասած, վերջերս նա ընդունեց Պետական Դումայի անդամ Մ. Աջեմեանին։

Ասում են, որ քննիչին Պետերբուրգից պատուիրագրված է քննութիւնը վերջացնել մինչև դեկտեմբեր, բայց քննիչը հազիւ մայիսից առաջ կարողանայ աւարտել իր աշխատանքը։

Այս գործի առիթով ընդամենը պատասխանատուութեան են ենթարկվում քննիչից 105 հոգի, բայց նրանցից ո՞րքանին մեղադրական ակտ կը ներկայացվի—դա ուրիշ հարց է։

Լուրեր են պտտում, թէ շուտով մի քանիսը արձակվելու են 10—25 հազար րուբլի գրաւականով։

Գործը քննվելու է Նովօչերկասկի դատաստանական պալատում, և ոչ թէ զինւորական դատարանում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ առաւօտեան Էջմիածնից վերադարձաւ Թիֆլիս և Վրաստանի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը։ Սրբազանի հետ վերադարձաւ նաև կօնսիստօրիայի նախանդամ Եփրեմ վարդ. Սուքիասեանը։

◆ Սեպտեմբերի լոյս 22-ի ամբողջ գիշեր Թիֆլիսում հեղեղ տեղաց։ Դեռ հեղեղից առաջ Աւճալեան փողոցով սկսեց հոսել գետաչափ ջուր, որից կանգ առաւ թէ ձիաքարշի և թէ կառքերի երթևեկութիւնը. Ապա սկսվեց յորդ անձրևը որ շարունակվեց մինչև առաւօտ։ Ջուրն ընդհանրապէս մեծ վնասներ չը տուեց. բարեբաղդաբար մարդկային զոհեր չեղան։ Միայն Հալա-

---

Դ.-րդ երգովը՝ քեզ կը պատմէ փոքրիկ քաջին մանկութեան նկարագրութիւնը։

Ան նախնեաց ապարանքին մէջ կը զարգանայ. դաստիարակն է Վարդգէս. իրեն հետ կանչէ, կը մեծնայ արիափայլ Տիգրանուհին. «Տիգրան ուշադիր կը զօրացնէ դեռահաս որդւոյն դաշը։ Հայաստան ոսկւով, արծաթով կը ճոխանայ, Արմաւիր շէնքերով պայծառացեալ նախանձելի կը դառնայ։

Ու Վահագն, զարգանալով, կը սկսի երգել նախնեաց վէպերը, իր մէջ կը վառի դիւցազնական հուրը։

*

Պատկանեան կերգէ Աժդահակի եւ Կիւրոսի պատմութիւնը։ Տիգրան անուոն արութիւններով փառապանծ՝ Մեծ կը հռչակուի։ Մարաց պետութեան մէջ, միահեծան Թագաւոր Աժդահակը կիշխէր, կը տիրէր աշխարհածաւալ երկիրներու. Իմաստուններն կը մարգարէանան, որ անոր դուստրը, հրաշագեղ Մանդանէ, արու զաւակ մը պիտի ծնի, որ աշխարհահռչակ քաջութեամբ պիտի փայլի։ Անգամ մը եւս Աժդահակ կը կանչէ մարաց դիտուններն ու իր երազը կը պատմէ, ըսելով թէ անուրջեր է, որ իր աղջկան արգանդէն կը բուսնէր ծառ մը, որ ամբառնալով կը հասնէր երկինք և ոստերով կը ծածկէր անհուն ընդարձակութիւն մը։ Գիտունները կը մեկնեն, թէ դիւցազն որդւոյն ծնունդն է, որ աշխարհ պիտի դայ Մանդանէ գլխոյէն։ Թագաւորը, վախնալով, ծերերու խորհրդովը Մանդանէն Կամբիւս անձար պարսկին կնութեան կուտայ. ու կը ծնի մանուկն Կիւրոս, որ մանկութեան օրերէն իր խումբին մէջ Թագաւոր կանուանուի. Աժդահակ կը վրդովի, վարհուրելով երազին մէջ կը տեսնէ.

«Տեսանէր կին մի ծիրանազգեստեալ,
Ի քարակտուր ծայր լերին նստեալ,
Երկունք ծննդեան զնա տանջէին,
Երեք դիւցազունք յայտնեցան ծնեալ։
Մին բազմեալ յառիւծ յարձակել դիմէր,
Երկրորդն հեծեալ յինձ՝ ի մուտս խոյանէր,
Իսկ երրորդ հզօրն նստեալ ի վիշապ՝.
Ընդդէմ արքայի ճակատ յարդարէր»։

Այս երազին վրայ Թագաւորը, խմբելով իր աւագանին, չարագուշակ երազը՝ անոնց կը պատմէ։ Անոնք կը մեկնեն. այդ դիւցազներէն մէկը Կիւրոսն է, երկրորդը նենգութիւն նիւթող Արբակն է, իսկ երրորդն, որ վիշապի վրայ բազմած էր, է նոյն ինքն հայոց մեծազօր Տիգրան Թագաւորը։ Աժդահակ, Տիգրանին ուժը սանձելու համար, կեղծ խնամութիւն մը կը հաստատէ, Տիգրանուհին իրեն տիկնանց-տիկին կուզէ ընել։

Տիգրանուհին Աժդահակայ կնութեան կերթայ, իրեն հետ է նաև Վահագն. հարսանեկան հանդիսի առեն՝ Վահագն ըմբշամարտութեան, սուսերամարտութեան առեն՝ իր քաջութեամբ հիացում ու զարհուրանք կը պատճառէ ամենուն, մանաւանդ Աժդահակայ. կը մտածէ թէ՝ չըլլայ թէ սա ինքն ըլլայ յանձին Տիգրանայ գուշակուած վիշապը։

*

Պատկանեանի դիւցազն Վահագն կը սկսի հրացումի քաջութիւնները։ Մարաստանի մէջ անհաղթ Բարշամը բռնացած է. արքային արքան Վահագնի պաշտօն կուտայ՝ որ երթայ նուաճէ այն բռնակալին ուժը. Տիգրանին որդին չէր գիտեր, որ այդ կերպով Աժդահակ մտադիր էր նենգութեամբ սպաննել զինքը. հայոց քաջերը՝ Վահագնը վտանգէ կազատեն։ Տիգրանին քաջազն որդին՝ տիկ ու յարդ ուսին, լեռնէն վեր կը Թռչի. իր ետևէն կը հասնի Բարշամ սուսերամերկ։ Վերը սարին վրայ զիրար չեն տեսներ. պատած է խաւար, կը տեղայ ջաղբը, կորոտան ամպեր։

Պատկերը՝ վայրենի, գոյները կայծակով շաղուած, տեսարան մը հրազարուր տեղի կունենայ ամպածրար սարին գլուխը։

«Ո՛չ կամէր Վահագն զյարդ իւր ցրուել,
Կամ զտիկ կաթին յուսոյ ի բաց դնել.
Եւ ահա յանկարծ փայլակն յամպրոպաց,
Եցոյց դիւցազին զարծուոյն սաւառնել։
Անդ սուսերամերկ Բարշամ խիզախեաց,
Ի խաւար մթան զիւր հարուած եած.
Այլ ընդ վայր էանց շառաչիւն օդոյն,
Վահագն բեռամբ իւր ապահով մնաց։
Դարձեալ շոգիք թանձր փայլատակեցին.
Կայր Բարշամ հանդէպ. ճչեաց արծուին,
Վահագն զիւր հաստ բիր իջուց ի գլուխն,
Բարշամ կործանեալ անկաւ ի գետին։
Ի մերժել լուսնոյ զծածկոյթ ամպրոպաց,
Երևէր սպիտակ ծիր յարդին ցրուած.
Զոր ծիր յարդգողի և կամ ծիր կաթին
Կոչեցին դիտողք ի տան աստեղաց»։

Այս երկրորդ յաղթանակն էր. Վահագնի անունը ալ զարհուրելի կը հնչէ նոյն իսկ բռնակալներու ականջին։ Աժդահակ սարսափի մէջ է. Տիգրանուհիին ձեռքով կուզէ Հայաստանը մատնել. սակայն հայկազն Թագուհին իր հայրենի հողին հաւատարիմ կը մնար. Վահագն Եկբատան կը հասնի, իր հօրաքոյրը կորզելով կը տանի Հայաստան։ Տիգրան ու Աժդահակ պատերազմի կը բռնուին. Վահագն քաջաբար կը պատերազմի, գեղարդով Աժդահակը կը զգետնէ. այն օրէն ի վեր դիւցազներգակ բամբիռներ իրենց երգերով անմահացուցին Վահագնի անունը փառագոռ։

*

Այս է »Վահագն» դիւցազներգութիւնը. Պատկանեան նոր առասպելական գիւտերու դիմած չէ, հայկական աւանդութիւններով կը բաւականանայ ու կը բամբռահարէ իր դիւցազը։ Մտածեցէք որ ձեռուընիդ անցնի հելլենական սքանչելի արձան մը պակասաւոր. դուք կուզէք զայն ամբողջացնել. Նոր արձանագործին կարևոր կըլլայ հեղինակին կրկին քաջութիւնը. Վահագնի երգի հօյակապ պատառիկին քերթողական ամբողջացումին համար, միևնոյն պարագան դիտելի է։ Պատկանեան իր խանդակաթ քնար հոգիով այդ պատառիկին հին հոգի, զուսանական հոգի է տուած։

Բ.

Պատկանեան բոլորովին սիրահարուած է հելլենական դիւցազներգութեան։ Վենետիկի մամուլը իրար ետևէ կը հրատարակէր հոմերական դիւցազներգութիւնները. հ. Եղիա Թովմաճանեան Թարգմանած էր Հոմերոսի Ոդիսականը և Եղիականը. վերջը իր աշակերտը՝ գրաբարեան աւելի մեծ կորովով կը Թարգմանէր Հոմերի Իլիականը։ Պատկանեան այդ Թարգմանութեանց խիստ ծանօթ ըլլալը ցոյց տուած է իր քերթողական մատենագրութեան մէջ։ Վահագնէն վերջը, Զմիւռնիոյ «Արև. Մամուլին» մէջ կը հրատարակէր ընդարձակ դիւցազներգութիւն մը՝ Զարմայր եւ Պաճրազիկ։ Այս հեղինակութեան մէջ Ոդիսական ներշնչումէն դուրս ելած՝ Իլիականին հզօր տպաւորութեան տակ գրիչ կը շարժէ։

*

Մեր հին պատմութենէն գիտենք արդէն, որ զարմանալի նահապետ մըն ալ ունեցեր ենք՝ Զարմայրը, որ Տրովադայի պատերազմի ատեն Աքիլլէսէն կը սպանուի։

Պատկանեան, ինչ որ կըսէ, հ. Չամչեանի սա պարբերութենէն նիւթ կառնէ իր դիւցազներգութեան. վենետիկեան պատմիչը կը գրէ.

«Յայս մարտ Թէպէտ և զօրացան Եթէովպացիք և Ամազոնք ի կողմանէ Պրիամոսի, բայց հուսկ յետոյ յաղթեալ ի յունաց՝ ցրուեցան. և զի Պենթեզիլէ Թագուհի ամազոնաց հզօր կռուէր, հասեալ ի նա քաջն Աքիլլեւս՝ կալաւ զհերաց նորա. և ընկեցեալ յերիվարէն՝ սպան զնա։ Եւ իբրև առաւել եւս սաստկացաւ պատերազմն, Հեկտոր որդի Պրիամոսի դիմեալ ի վերայ Աքիլլեւսայ՝ վիրաւորեաց զնա չարաչար. այլ Աքիլլեւսայ ոչինչ գրեալ զվէրսն՝ պնդեցաւ զհետ Հեկտորայ և սպան զնա։ Զայն իբրև ետես մերս Զարմայր, ի դիմի հարաւ նմա և ի հարկանել զմիմեանս սաստկութեամբ՝ սպանաւ ի նմանէ նա ինքն Զարմայր»։

Բնական է որ Աքիլեան պատերազմէն նիւթ առնել ու երգել ունի մեծ հրապոյր, կարելի է գտնել քերթողական պատրաստ պաշար։ Հոմեր բանաստեղծութեան ծով է, ուր Պատկանեան պիտի ուզէ Թաթխել իր գրիչը։ Բայց իր նիւթին ընտրութեան աքաղի և Վերայի թաղամասերում ջուրը ցցվեց նկուղները և ստորերկրեայ բնակարանները։ Մոռացանք յիշել, որ Աւճալեան փողոցով հոսող ջուրը այն խոշոր անձրևի ջուրն է եղել, որ 1 ½ ժամ առաջ եկել էր Թիֆլիսին մօտիկ գտնվող Լօտկին-Գօրի կոչված տեղում մեծ առատութեամբ։

◆ Կազանի համալսարանի պատմութեան պրոֆեսօր Բլագօն հեռագրով յայտնել է քաղաքային վարչութեան իր համաձայնութեան մասին՝ դասախօսութիւններ կարդալ Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացքներում։

◆ Մինչև սեպտեմբերի 20-ը Թիֆլիսում բացվելիք կանանց բարձրագոյն դասընթացքների համար ստացված էին մօտ 230 խնդրագրեր։ Սրանցից 190-ը արդէն ցուցակագրված են 1-ին դասընթացքի համար։ Դասընթացքների բացումը տեղի կունենայ սեպտեմբերի 26-ին, երբ Թիֆլիսում կը լինեն արդէն բոլոր պրոֆեսօրները։

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, «Հօրիզօն» թերթի հրատարակութիւնը, խմբագրութեան որոշմամբ, ժամանակաւորապէս ընդհատվում է։

◆ Կ. Ալիխանեանի նախաձեռնութեամբ միտք է յղացել կառուցանելու սեփական շէնութիւն նկարչական դպրոցի համար։ Այդ շէնութեան համար քննութեան են առնվել մի շարք առաջարկներ և ի միջի այլոց տեղ մատնանշված է քաղաքի 1-ին թաղամասում։ Գումար ժողովված է սահմանափակ քանակով. եթէ գումարներ շատ լինեն, մտադրութիւն կայ կառուցանել շէնութիւնը չորս յարկանի։

◆ Թէլաւի ճանապարհին մի քանի զինված մարդիկ յարձակվում են վրաց ազնուականութեան պարագլուխ իշխ. Թումանովի վրա և խլում են նրանից նրա մօտ եղած 5 րուբլին։ Երբ իմանում են թէ ով է իրանց զոհը, «մարդասէր» չարագործները իշխանին վերադարձնում են նրա 5 րուբլին։

◆ Մխիթար Եղիազարեան անունով մէկը, որ բեռնաւորված է ընտանիքով, կամենում է իր 6-ամեայ աղջկան տալ բարեբար մարդկանց որդեգրելու։ Դիմել Բեթղեհէմի տուպիկ, № 1, տ. Իսայեվի։

◆ Երկուշաբթի, սեպտ. 21-ին, Թիֆլիսի դումայի նիստը թէև կայացաւ և մի քանի հարցեր լուծումն ստացան, բայց ժամը 10-ի մօտ Թիֆլիսի ոստիկանապետը հաղորդեց հեռախօսով, որ Ջրհեղեղի պատճառով քաղաքի մի քանի մասերը աւերումների են ենթարկվել և անհրաժեշտ է, որ քաղաքային վարչութիւնը ներկայ լինի։ Այդ պատճառով Դումայի նիստը փակվեց և վարչութեան անդամներն ու մի քանի ձայնաւորներ փութացին աւերման ենթակայ տեղերը՝ օգնութիւն հասցնելու։

◆ Սեպտեմբերի 21-ին X քաղաքամասում զինուոր պահակները ոստիկանների հետ միասին շուրջկալ կատարեցին և ձերբակալեցին 27 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

◆ Անցեալ տարի, սեպտեմբերի 13-ին, իշխանուհի Մ. Թումանեանի նախաձեռնութեամբ Հալաբարում հաստատվեց աղքատ բնակիչների համար ձրի ճաշարան, որը, հիմնադիրների միջոցների բացակայութեան պատճառով, պարփակվել է մի փոքրիկ խոհանոցում մի մասնաւոր տան մէջ, ուր երեխաները գալիս էին ճաշի ժամանակ և ստանում էին տաք կերակուր։ Շնորհիւ ճաշարանի հիմնադրուհու անխոնջ աշխատանքների, ներկայումս հնարաւոր է դարձել ձրի ճաշարանի համար վարձել առանձին շէնութիւն, որը սեպտեմբերի 20-ին օրհնվեց։ Ցերեկվայ ժամը 12-ին ճաշարանի շէնութիւնն եկան բարեգործ տիկիններ, բարեգործական ընկերութիւնների ներկայացուցիչները և քաղաքային դումայի ձայնաւոր Բարօվը, որից յետոյ կատարվեց մաղթանք սկզբում ուղղափառ, յետոյ արդէն հայ-լուսաւորչական հոգևորականութեան կողմից։ Մաղթանքը վերջանալուց և ջրով օրհնելուց յետոյ, քահանաներից և ներկայ եղող անձերից ճառեր արտասանվեցին, որից յետոյ ճաշարանի հիմնադիր տ. Թումանեանը բոլոր հիւրերին հրաւիրեց թէյի իսկ աղքատ աշակերտներին տվեց ճաշ և միրգ։ Այժմ ձրի ճաշարանում ճաշում են 21 հոգի. իւրաքանչիւր երեխայի վրա ծախք է լինում 2 ր. 60 կ. ամսական և բոլոր երեխաներն էլ կերակրվում են բարեգործական միջոցներով, որոնք հազիւ ծածկում են բոլոր ծախքերը։ Միջոցների բացակայութեան պատճառով, ստիպված, շատ քաղցած երեխաներ մերժում են ստանում տաք կերակուր ստանալու։ Համոզված ենք, որ յարգելի իշխանուհու բարի օրինակը վարակիչ կը դառնայ հարուստների համար, որոնք չեն խնայի իրանց օգնութիւնը այդպիսի մի վերին աստիճանի համակրելի գործը հաստատուն հիմքերի վրա դնելու և յարատևելու համար։

◆ «Դրօէբա» լրագիրը յայտնում է, որ իշխ. Կօբուլօվը իր մեծ կալուածքը, մօտ 800 դեսեատին հողաբաժին Բօրչալուի գաւառում, վաճառում է մի քանի հայերի, որոնց հետ բանակցութիւններ է վարում։ Սղնախի գաւառում իշխ. Մալիապ Անդրօնիկօվը և նրա համանուն ազգականները Ռուսաստանի կենտրօնական նահանգներից եկած գաղթականներին վաճառել են մօտ 1000 դեսեատին։ Մի խումբ գնորդներ՝ 20—30 տուն արդէն բնակվել են այնտեղ. շուտով սպասվում է մնացածների գալուստը։

◆ Ստացանք Յ. Սօլօվեանի «Ծուղրուղու» մանկական գրքոյկը, տպված Թիֆլիսում, գինը 15 կօպէկ։

◆ Մօսկվայից հաղորդում են մեզ, որ թէև սեպտ. 6-ին կայացաւ տեղական հայ գաղութի ծխական ժողով և ընտրվեցին պատուիրակներ Էջմիածին գնալու՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման ներկայ լինելու, բայց ընտրված պատուիրակների (Յովհաննէս Ժամհարեան և Ստեփան Մամիկոնեան) հրաժարման պատճառով, Մօսկվայի հայ գաղութը չը կարողացաւ ներկայացուցիչ ունենալ Էջմիածնում։

◆ «Մշակի» № 206-ում տպված Էջմիածնից գրված թղթակցութեան մէջ մի սխալ է մտել. ժամանակաւոր դիւանապետ եղել է ոչ թէ Բենիկ վարդապետը, ինչպէս գրված է, այլ Բաբգէն վարդապետը, որն և Վեհ. Կաթողիկոսի հրամանով գրել է հերքումն «Հօրիզօն» թերթի հաղորդած սխալ տեղեկութեան մասին։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Մուշի առաջնորդ Ներսէս ծ. վ. Խարախանեան Կ. Պօլսի կենտր. կառավարութեանը խփած մի հեռագրով յայտնում է, թէ չը նայած որ սահմանադրական կառավարութեան սիստեմ է ընդունված Թիւրքիայում, բայց Մուշի շրջանում հայերը չափազանց նեղվում են հին բէժիմից ոչ մի զանազանութիւն չունեցող կարգերից։ Մուշի շրջանի Վարդենիս, Արտէս և Արմտան գիւղերի բնակիչների հողերն ու կալուածները տրված են ուրիշ վայրերից այդ շրջանը գնացած գաղթականների, չը նայած որ այդ կայքերի իսկական տէրերից շատ-շատերը գտնվում են հէնց իրանց օրինական հողերի վրա և կամ նոյն շրջանի մի այլ կէտում։ Իսկ այն փոքրամասնութիւնը, որ վերոյիշեալ գիւղերի շրջանում կալուածներ ունէր ու ինքը գտնվում էր օտարութեան մէջ, սահմանադրական բէժիմի յայտարարած ազատ երթևեկութեան շնորհիւ, վերադարձել է իր հայրենիք, բայց որովհետև, յիշեալ գրութեան շնորհիւ, հողազուրկ է մնացել, այդ պատճառով բազմաթիւ ընտանիքներ մատնվել են թշուառութեան ու փչացումի։ Մուշի կառավարութիւնը վերոյիշեալ թշուառութեանը վերջ տալու նպատակով թէև քանիցս դիմել է Կ. Պօլիս՝ ըսպասելով նորագոյն կարգադրութիւնների, բայց այդ դիմումները մնացել են ապարդիւն։ Ներսէս վարդապետ իր հեռագրում շեշտում է այն հանգամանքը, որ այս խնդիրը եթէ հիմնովանից չը կարգադրվի, այդ դէպքում առաջիկայ մօտալուտ ձմրանը բոլորովին կը փչանայ Մուշի շրջակայքի հայութիւնը։

◆ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը Վանի առաջնորդութեան միջոցով մի համախօսական է ստացել Կաւաշից, որ Աղթամարի կաթողիկոսական թեմի իրաւասութեանն է ենթարկվում։ Այդ համախօսականի ստորագրողները շեշտում են, որ Աղթամարի կաթողիկոսութիւնը ներկայումս ներքնապէս քայքայված վիճակի մէջ է գտնվում և, շնորհիւ այդ հանգամանքի, եկեղեցական զարդերն ու անօթները, թանգագին քարերն ու ակնեղէնները զանազան անձնաւորութիւնների կողմից կողոպտվել են։ Համախօսականի հեղինակները խնդրում են անաչառ ու խիստ քննութիւն կատարել ու երևան հանել գողացված իրերը և Աղթամարի վանքը կառավարելու համար ժամանակաւոր մի նոր վարչութիւն կազմել վստահելի տարրերից։

◆ «Information»-ի Պօլսի թղթակցի ասելով Կ. Պօլսի հայկական հոգևոր շրջաններում շարունակում են խօսել՝ թէ հնարաւոր է որ Կ. Պօլսի հայկական ուղղափառ եկեղեցին միացվի ռուսական ուղղափառ եկեղեցու հետ։

Ամերիկացի պաստօրները այժմ մեծ գործունէութիւն են ցոյց տալիս Թիւրքիայում նրա համար, որպէսզի բողոքականութեան կողմը յարեն հայկական վիլայէթների հայ ազգաբնակութիւնը,—ասում է թղթակիցը։ Միացեալ-Նահանգները հզօր ջանքեր են թափում Կ. Պօլսում, Բէյրութում և հայկական գաւառներում նրա համար, որպէսզի մեծացնեն իրանց ազդեցութիւնը և աւելի ամուր կերպով հաստատեն իրանց շահերը ֆինանսական և երկաթուղային հարցերում։

Այս վերջիններում Միացեալ-Նահանգների ջանքերը Թիւրքիայում հանդիպում են բաւական նպաստաւոր ընդունելութեան կառավարութեան ներկայացուցիչների կողմից, որովհետև իշխանութիւնները նրանց մէջ տեսնում են գերմանական ձգտումների մրցումն՝ ամրապնդել իրանց ազդեցութիւնը Թիւրքիայում, նաև իբրև ներհակ մի քանի ուրիշ պետութիւնների քաղաքականութեան։

Ուրիշ վերաբերմունքի են, սակայն, հանդիպում բոլոր այն ջանքերը և փորձերը, որոնք վերաբերում են պետութեան դաւանութիւններին և եկեղեցիներին, և պէտք է ասել, որ այդ հաւատորսութեան դէմ Թիւրքաց կառավարութիւնը ձեռք է առնելու եռանդուն միջոցներ,—աւելացնում է «Information»-ի թղթակիցը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ*)

1. Փիւզալեան Տ. «Դասագիրք բնական պատմութեան» հայոց տարրական դպրոցների համար։ Մասն առաջին՝ օդ, ջուր և երկիր։ Գինն է 60 կօպ., Թիֆլիս, 1909 թ.։
2. Նիկ. Սարգսեան «Դասագիրք բնական պատմութեան» հայոց տարրական դպրոցների համար։ Մասն առաջին՝ մարդ և կենդանի։ Գինն է 70 կ., Թիֆլիս, 1909 թ.։

Գանք այժմ Փիւզալեանի գրքի լեզուին և գրելու ձևին։ Փիւզալեան, չը գիտենք ինչու, այս դասագրքի մէջ ընդունել է զրուցատրական եղանակը. «ահա ձեր առաջ դրված է», «դուք տեսնում էք», «եթէ դուք ուզենաք» և այլն, որից երևում է, որ Փիւզալեան իր գիրքը յատկացրել է յատկապէս ուսուցիչներին, որոնք գործ ունեն մի երկրորդ անձի (դասարանի) հետ։ Այդ ձևը վատ չէ կարդալու համար, զրուցելու համար, բայց անպէտք է մի դասագրքի մէջ, որը պէտք է ունենայ աշակերտը իր ձեռքին. իսկ սա պատմելիս երբեք չի ասի՝ «դուք տեսնում էք», «դուք ուզում էք» և այլն, այլ «մենք կը տեսնենք», «ինչպէս գիտենք» և այլն։ Եւ ճիշդ որ, եթէ այս գրքի վրա նայենք ոչ որպէս դասագրքի՝ աշակերտների համար գրված, այլ որպէս ձեռնարկի՝ ուսուցիչների համար, նա ունի որոշ յարմարութիւններ. բայց հարցը նրանումն է, որ Փիւզալեան անդադար խառնում է այդ երկու սկզբունքը, խառնելով նա խառնում է նաև լեզուն՝ «մենք տեսանք, դուք տեսաք, վերցնում եմ, դուք գիտէք» և այլն, որ մեծ անյարմարութիւններ է ստեղծում կարդալիս, մանաւանդ սովորելիս։ Եւ դա առաջացել է նրանից, որ Փիւզալեան ինքը իր համար չէ պարզել իր դասագրքի նպատակը։

Բայց լսենք իրան Փիւզալեանին. «Դասագրքի գործադրութիւնը,—գրում է նա,—բնական գիտութիւնների ուսուցման գործում պիտի սահմանափակ լինի»։

Այսինքն ինչպէս թէ սահմանափակ լինի. աշակերտները պէտք է ունենան ձեր դասագիրքը թէ՞ ոչ։ Եթէ ոչ. ասացէք պարզ, թէ սա ոչ թէ դասագիրք է, այլ ձեռնարկ, ընթերցանութեան գիրք։ Բայց պարոնը, սահելով այդ փափուկ հարցի վրայից, մի քանի տող յետոյ աւելացնում է. «Դասագիրքը անհրաժեշտ է (ստորագծումը ամեն տեղ մերն է), միայն որպէս օժանդակ ձեռնարկ՝ գիտցածը ստուգելու և ամրապնդելու համար»։ Եւ... էլի մի բան. գիտէք ինչի. «մասնաւորապէս այն դէպքերի, երբ աշակերտը որևէ պատճառով բացակայել է դպրոցից ու չի տեսել ու լսել ուսուցչի բացատրածը»—բացատրում է մեզ Փիւզալեանը (երես 5)։

Ուրեմն Փիւզալեանի ասելով դուրս է գալիս, որ աշակերտը ինչ որ չի լսել ու տեսել՝ կարող է լսել ու տեսնել կարդալով այս գիրքը։ Սա արդէն մանկավարժական մի գիւտ է մեզ համար, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ գրքի երկու-երրորդը լինելով ֆիզիքայից՝ ուսուցիչը գլխից մինչև վերջ փորձեր է անում դասարանում և միշտ էլ ասում է՝ «ինչպէս դուք տեսաք», իսկ աշակերտը կրկնում՝ «ինչպէս մենք տեսանք, համոզվեցինք, քննեցինք» և այլն և այլն։

Իսկ այս խառնափնթորումը, ինչպէս ասացինք, առաջ է եկել նրանից, որ, ըստ երևոյթին, յարգելի Տ. Փիւզալեանը ցանկացել է մի հարուածով երկու որս անել «и капиталъ пріобрѣсти и невинность соблюсти»—համ աշակերտներին դասագիրք տալ, համ էլ ուսուցիչներին՝ ձեռնարկ։ Եզրակացնելով մեր ասածը այս դասագրքի մասին, ամփոփում ենք.

ա) Այն գիրքը, որ այժմ լոյս է տեսել, դա բնական պատմութեան գիրք չէ։

բ) Այս գիրքը դասագիրք չէ, այլ ձեռնարկ։

գ) Փիւզալեան, անծանօթ լինելով մեր տարրական դպրոցներում բնական պատմութեան դասաւանդման ծրագրի, աշակերտների հասակի՝ ու պատրաստութեան հետ այս գրքի մէջ խառնել է ֆիզիկան բրազնութեան հետ, բրազնութիւնը աշխարհագրութեան, աշխարհագրութիւնը՝ բնական պատմութեան, բնական պատմութիւնը բնագիտութեան (ֆիզիկայի) հետ։

դ) Լեզուն ծանր է և գլխովին անհամապատասխան մեր տարրական դպրոցների երեխաների համար (տես երես 8, 9, 10 և բոլոր փորձերը)։

ե) Որպէս մասամբ միայն բնագիտութեան ձեռնարկ, և այն՝ հայ ուսուցիչների համար, ունի առաւելութիւններ, ամփոփ է և կարելի եղածին չափ պարզ։

Մինչև միւս գրքերի դուրս գալը մենք ի հարկէ չենք մտնում նիւթի մշակութեան մանրամասնութիւնների մէջ, նոյնպէս և չենք փնտռում խնդրանքներ՝ տառի, բառի, անաջող դարձուածքի, գուցէ և սպրդած ոչ ճիշդ արտայայտութեան։

Գալով Նիկ. Սարգսեանի «Բնական պատմութեան» դասագրքին, ինչպէս արդէն սկզբում նկատեցինք, կազմողը ճիշդ հասկացել է, թէ ինչ է «Բնական պատմութիւնները» և, որ գլխաւորն է, թէ ինչ պիտի աւանդել մեր ծխական դպրոցներում բնական պատմութիւնից. ուստի նա էս (ճիշդն ասած՝ Օտտօ Շմէյլը) նիւթի մշակութիւնը տանում է մօտաւորապէս այնպէս, ինչպէս դա ծրագրված է նախագծում. մասնաւորելով խօսքս՝ պէտք է ասենք, որ թէ նիւթի մշակութիւնը, թէ լեզուն ընդհանուր առմամբ լաւ է. բաւարար են նկարները, վատ չէ տիպը, մի բան՝ որ չէ կարելի ասել Փիւզալեանի գրքի մասին։ Այնուամենայնիւ ունենք մի շարք նկատողութիւններ անելու.

«Բնական պատմութեան» գիրքը սկսում է շատ չոր ու ցամաք. ինչ բան է բնութեան պատմութիւնը, ինչ իրերի և նիւթերի հետ գործ ունի նա. այս մասին ոչ մի յիշատակութիւն, այլ բացում ես գիրքը և սկսում. «Մարդու մարմինը բաղկացած է և այլն և այլն»։ Երեխաների համար դա շատ չոր է։ Նոյնը կասենք «Կենդանիներ» բաժնի համար. ոչ մի բացատրութիւն կենդանական թագաւորութեան ստորաբաժանումների մասին՝ ինչ է կարգ, դաս, տիպար, ընտանիք. ոչ մի խօսք բացի վերնագրից՝ տիպար Ա., դաս 1 և այլն։ Իսկ թէ ինչ է դասը, տիպարը, ինչով են զանազանվում միմեանցից—ոչ մի բան գրքում։ Կան լեզուական թեթև անճշդութիւններ. թթուտի տեղ՝ «թթու աղաթթու (?) (соляная кислота ?). չենք ասում «ոսկրները ուժեղ են» (եր. 97), այլ ամուր են։ «Դմակաւոր ոչխարները գլխաւորապէս ապրում են Հայաստանում» (եր. 98). դա ազգասիրութիւն է, որովհետև դմակաւոր ոչխարները նոյնքան ապրում են Հայաստանում, որքան և Պարսկաստանում Թիւրքիայում, Յունաստանում և այլն։

Բայց այս բոլորն էլ էական բաներ չեն և չեն գցում Սարգսեանի գրքի այն արժանաւորութիւնները, որոնց մասին խօսեցինք։

Ա. Ա.

ՄԱՄՈՒԼ

Կ. Պօլսի «Հայրենիք» թերթը, որի լուրջ ուղղութիւնը առիթ ունեցանք շեշտել, վերջերս սկսել է մի շարք մերկացումներ և քննադատութիւններ մի որոշ խմբակի գործունէութեան մասին և դրանով առիթ տուել բուռն բանակռուական պայքարի։ Մերկացման առաջին նիւթն է Վանի առաջնորդական տեղապահ Զաւէն վարդապետի մի նամակը, որ «Հայրենիք» թերթը հետևեալ նախաբանով է տպել.

Մասնաւոր կարևորութիւն տալով հետևեալ նամակին, զոր Վանայ առաջն. տեղապահ Զաւէն վրդ. ուղարկած է Կահիրէ գտնուող իր մէկ վանեցի բարեկամին, կը հրատարակենք, խնդրելով ընթերցողներէն, որ ուշադրութիւն ընծայեն հոն նկարագրուած երևոյթին, որ միայն Վասպուրականի մէջ չէ որ կը տեսնուի, այլ նաև Հայաստանի ուրիշ կողմերն ալ, այնպէս որ կրնանք ըսել թէ այս նամակը հրապարակ կը հանէ մեր ազգային կեանքին տևականութեանը վտանգ սպառնացող շատ ծանրակշիռ, ողբալի և սխալ ուղղութիւն մը, որուն գլուխը գտնուողները կը պարծենան գտնուիլ քաղաքակրթութեան զէնիթը։ Ի նկատի ունենալով, որ Վանի դէպքերը

տեն Պատկանեան պիտի մտածէր, որ կերպով մը կը մրցակցէր Հոմերի հետ։ Բնական է որ Պատկանեան ինքզինքը մեծ քերթողահօր հետ չափելու միամտութիւնը ունեցած չէ, սակայն յանդգնօ ինքը այդ մրցումին մէջ կը մտնէ։

Հոմերոս իր զմայլելի հիացումներովը դարերով օրօրած է մարդկութեան գեղեցկին ճաշակը. Տրոյայ դաշտին մէջ միայն զէնքը անմահացուցած ենք իբր քերթող վիպագիր։ Պատկանեան իր քնարը առած կը մտնէ այն պատերազմին դաշտը. դու կը կարծես, որ նոր տեսարաններու, նոր վիպասանութեանց ունկնդիր պիտի ըլլաս։

Բայց ոչ։

Պատկանեան այդ դիւցազներգութեան մէջ քեզի կը պատմէ հելլէն պատերազմի հոմերական նկարագրութիւնները. մանրամասն կը խօսի այդ օտար հողի ազգաբնակութեան հոգեբանութեան վրայ։ Հայը բարքերով նախանձելի կը նկատուի, հայուն երգը անուշ կը համարուի։ Պանթազիլէ՝ ամազոնեան թագուհին բուռն կերպով կը սիրահարուի Զարմայրի, որուն խորանին մէջ մտած՝ կը խնդրէ, որ զինքը իրեն կին առնէ։ Զարմայր կը դիմադրէ, կիմացնէ, որ հայոց մէջ բազմակնութիւնը սովորութիւն չէ, և թէ ինքը Հայաստանի մէջ ունի իր սիրեցեալ կինը ու զաւակներ, և երկրորդ կին մը առնելով՝ անոնց սուրբ սէրը պղծած կըլլայ։

Հետաքրքրական է դիւցազներգութեան այդ էջը, ուսկից հոս լեզուական ու գրագիտական տեսակէտով արժանի կը դատեմ տասնեակ տողեր արտագրելու.

«Զարմայր գնաց դէպ իւր խորան, և անդ նստաւ դրանը,
Տարաժամ էր արդէն օրը, ճըրագ մուծին վրանը։
Պանթազիլէ մէկ քանի հատ ըսպառազէն ընկերօք
Հեռաստանէ երևեցաւ՝ սիրտը լիքը տարփանօք.
Այս թագուհին մտադիր էր ամուսնանալ Զարմայրին,
Բայց չը կարէր համարձակիլ յայտնել խորհուրդ իւր սրտին։
Նա լաւ գիտէր, որ Կասսանդրա և Պօլիքսէն օրիորդք,
Կան մշտապէս նորա սիրոյն դարանակալք և որսորդք.
Այսօր այն ևս տեսաւ, որ նա Հեղինէին անարգեց,
Նորա չքնաղ գեղեցկութեան արժանի յարգ չտուեց։
Բայց երբ յիշեց իւր և նորան առանձնակի խօսածը,
Եւ Արայի-Շամիրամի անցից վերայ ասածը,
Կասկածեց թէ չըլնի որ ինքն ևս առնու այն պատասխան,
Այս մտատանջ կասկածներով եկաւ մըտաւ այն խորան։
Զարմայր նորան մեծ քաղցրութեամբ իւր սենեակը ընդունեց.
Որքան կարէր մըտերմաբար և սիրալիր մեծարեց.
Ասքանազեան քաջիկ գնդաց քաջ և աբի զօրավար,
Նստեցոյց իւր քաղցրիկ հիւրին ուր դարսած է բարձկնեար»։

Պանթազիլէ՝ Զարմայրի վրանին չորս կողմը լաւ մը կը զննէ։ Հայ նահապետին այդ վայրը զարդարուած էր զէնքերով, գրահներով և զանազան կազմածներով, ատոնք ամենը պատերազմներու աւարներ էին։ Զարմայր կաղաչէ, որ չքնաղ դշխոյ Պանթազիլէ իր այն զարդերէն յիշատակ մը առնէ։ Ամազոնաց թագուհին, պատշաճ համարելով, կը պատասխանէ իր այդ առաջարկին.

«Ծիծաղեցաւ կոյս թագուհին, և ասաց. լսէր, քաջ Զարմայր,
Ես կը բաղձամ բոլորովին քեզ ունենալ իբրև այր.
Մի երկնչիր, քո աւարէն բաժին կառնում համարձակ,
Համարելով որ ինչ քո է, այն և իմս է բովանդակ։
Ոչ, պատասխան տուեց Զարմայր, չեմ կարող այդ, թագուհի,
Այլ է պայման ամուսնական, այլ է բաժին աւարի,
Ինչպէս ծանօթ և բարեկամ յօժար եմ տալ ամենայն,
Բայց քեզ լինել ամուսնակից՝ խոչք և խութք կան բաւական։
Ես կին ունիմ սիրակից, մէկ դուստր ունիմ, մէկ որդի,
Իմ կընոջ և իմ զաւակաց չուզեմ առնել որբ, այրի,
Եթէ ես յայս պատերազմի մեռնիմ, մըտնեմ գերեզման,
Նոցա թափած արտասուքը թաց կանեն իմ դամբարան»։

Սակայն այս խօսքերը Պանթազիլէի ծիծաղելի կերևի, ու կը պնդէ, որ Զարմայրի երկրորդ կինն ալ ինքն ըլլայ։ Հարկ չկայ երկարել մեր խօսքը այս դիւցազներգութեան նիւթին վրայ։ Քերթողը չէ կրցած զայն հետաքրքրական ընել. միևնոյն մէկ կէտը կընդլայնէ. պատկերներու, դէպքերու փոփոխութիւն չունի։

Ամեն դրուագի մէջ լեզուի միութիւնը յարգուած չէ. առաջին երգերուն մէջ կարծես զուտ արևմտեան բարբառով կը գրէ, յետոյ արևելեան աշխարհաբարի կը մօտենայ։

Տաղաչափական անուշ բնական պարզութիւն մը ունի. վարժ է ատոր մէջ. հ. Թովմաճանեանի տաղաչափութեան հետևելով՝ յանդաւոր է ըրած իր դիւցազներգութիւնը։

Հոգեբանութիւնը պարզ է. Զարմայրի բերանով կուզէ հայկական պարկեշտութիւնը դրուատել, սէր ցոյց տալ դէպի հայրենի հողը. պանդխտութեան տաժանքը կողբերգէ։ Նախերգանքին մէջ կը գրէ. «Երգեալ 1862 ամի ի Քոսթրոմայ քաղաքի՝ ի տարագրութեան»։ Վիպասանական խանդէ որքան որ զուրկ է այս դիւցազներգութիւնը, բայց անհուն գնահատումի արժանի է հեղինակին պատմական և դիւցաբանական հմտութիւնը։

*

Պատկանեան յիշեալ հովուերգական ու դիւցազներգական երկու մեծ քերթուածներէն զատ՝ արևմտեան հայ մամուլին մէջ ծերունի հասակին՝ հրատարակած է փոքր քերթուածներ. բնական է թէ կը հետաքրքրուինք թէ ինչ աստիճան խանդ կայ անոնց մէջ։

Ծերունին անուշ ու ողբացող լեզուն է որ կը շարժի. ան տխրունի բուն է որ կողբայ երկրին անցեալ փառքին վրայ. կը բարձրանայ Մասիսի սարէն վեր, զինքը աղբիւր մը քով ծառի մը տակ կը գտնես. Ծերն ի Մասիս աղբիւրի բերնով քեզի հետ կը խօսի թագաւորական փառքերը, ազգային եկեղեցւոյ մարտիրոսական շրջանի ուրուանկարը կընէ։ Եւ կը յուսայ, որ կը հասնի Հայաստանի ոսկեդարը։

Պատկանեան Գաբրիէլ տէր-հայրը՝ ունի հռչակ մը, որուն փառքի ձայնը կը մնայ Ռուսաստանի մէջ. Թիւրքիայի հայութիւնը զինքը վաղուց մոռցած է. բայց ոչ իր որդին Ռափայէլ Պատկանեան—Գամառ-Քաթիպա անունով ծանօթ բանաստեղծը, որ անմահ կը մնայ նաև Թիւրքիոյ հայոց մէջ։ Բայց պէտք է ըսել, որ իբրև տաղաչափ, վարժ քերթող ու հայկաբան՝ հայրը միշտ գերազանց կը մնայ։

Լէօ առհասարակ՝ շատ խստիւ դատած է իր հայրենակից գրիչները. չնայելով որ Գամառ-Քաթիպա իր հօր վրայ հիացած զայն հանճար կանուանէ, սակայն իբր բանաստեղծ՝ Լէօ անոր որդին գերազանցօրէն շատ բարձր և շատ վեր կը բռնէ։

Ճաշակի խնդիր արդեօք. Թիւրքիոյ հին հայերը կը սքանչանային տէր-Գաբրիէլ Պատկանեանի քնարին վրայ, սքանչացողներէն մէկն ալ սքանչելի շաքար-լեզու Գարեգին եպիսկ. Սրուանձտեանցն էր։

Ե.

---

*) Տես «Մշակ» № 207.

ազգ. ժողովի և կենտր. վարչութեան քննութեան նիւթ են դարձել, մենք կարևոր ենք համարում արտատպել Զաւէն վարդապետի նամակը, որ Թւագրված է յուլիսի 1-ից.

... Սակայն ես այս քանի մը ամսուան բնակութեամբս ի Վան սա համոզման եկած եմ, թէ անբաղդութեան խստաշունչ հովը Վասպուրականի ազնուագոյն զաւակները հեռացուցած է անոր ծոցէն և թողած միայն զանոնք, որ բոլորովին անտարբեր են իրենց մօր բարօրութեան. այո, մեռելատիպ անտարբերութիւն մըն է որ կը տեսնեմ շուրջս հանդէպ Վասպուրականի, անոր յիշատակներուն և անոր պատուին մանաւանդ: Եւ ասոր ապացոյց չէ՞ այն պլան-պէճ իմաստակներուն գոյութիւնը, որոնք, ինչպէս գիտէք, ազատ ասպարէզ գտած են իրենց աղէտաբեր գործունէութեան, արհամարհելով և թշնամանելով հայրենի կրօնը, մայրենի եկեղեցին, նախնեաց յիշատակները և այն ամեն բաները, որոնք նուիրական են ամեն հայու սրտին: Պիտի մեղադրէք զիս, եթէ ցաւս յայտնեմ Վասպուրականի մէջ ապրող հազարաւոր ժողովրդի համար որ բակար fkorի մը պէս կը դիտէ իր հայրենի պատուական օջախին քանդումը, բարոյականին կործանումը, ոդիական և ծնողական յարաբերութեանց խզումը, նախնեաց սուրբ ոգիին թշնամանումը, անոնց յիշատակաց հայհոյումը, հայրենեաց Աստուծոյն նախատումը և անոր սուրբ կրօնին արհամարհումը. տակաւին ո՞րն ըսեմ. անկարելի է որ զգայուն հայու մը սիրտը արիւն արցունք չթափէ ի տես այս զարհուրելի վիճակին: Եկէք, մտէք անգամ մը Վասպուրական և տեսէք այս սուրբ և հոյակապ մենաստանները, որոնք բռնապետութեան ամեն փոթորիկ արհամարհելով՝ իրենց գոյութիւնը պահպանեցին ցարդ, ինչպէս կողոպտուած հիմա իրենց բոլոր զարդերէն հետզհետէ դէպի կործանում կը դիմեն և այն ալ ոչ թէ Թիւրքի կամ քիւրդի ձեռամբ, այլ անարժան հայորդիներու կործանարար ձեռքերով:

Մտէք Աղթամար և տեսէք թէ խաչ մը մնացեր է հոն, բարեպաշտ հայուն արցունքներն ընդունելու համար, կամ այդ սրբազնասուրբ տաճարը ինչպէս ամայացած է և մերկացած բոլորովին. աղօթաւորի պաշտօնը մնացեր է ծովային թռչուններուն: Շրջեցէ՛ք գիւղ և քաղաք և տեսէք մեր երիտասարդութեան թեթեւսոլիկութիւնը և մանաւանդ բարոյականին անկումը, տեսէք մեր դպրոցական անմեղուկ տղոց մտքին ու զգացմանց ապականումը, հնազանդութեան և կարգապահութեան ոգիին վերացումը, ամօթխածութեան ջնջումը, տեսէք թէ ինչպէս փոքրիկ մանուկը կարհամարհէ ծնողաց և դաստիարակաց ամեն հրաման, չընդունիր հաստատուն կերակուր, այլ կը նախապատուէ Թուցիկ գրականութիւնը, ինչպէս կանխասատ անիկայ ծնողքին և հրապարակաւ կը ծեծէ իր դաստիարակը փոքրիկ յանդիմանութեան մը փոխարէն: Ա՜խ, ո՞րն ըսեմ, հայն իր տոկուն ոգիով կրցաւ դարերու հալածանքներէն ինքզինքն ազատել. բայց դժբաղդաբար հիմա այս ազատութեան ժամանակ դէպի կործանումը կը դիմէ. բռնութիւնը զանիկա կոտորեց անխնայ, բայց հաստատուն ժայռի մը պէս կրցաւ դիմադրել բիւրաւոր ալիքներուն և պահեց իր կացութիւնը, որ այժմ վտանգի մէջ է ներքին թշնամիներու շնորհիւ. մշտապէս կողոպտուեցաւ և սովալլուկ ապրեցաւ, բայց իր բերնին պատառը կիսեց և անով շէն ու պայծառ պահեց իր մենաստանները, տաճարները և նախնեաց յիշատակները, որոնք այժմ կը կողոպտուին և կը կործանուին իր զաւակներուն ձեռքով. տեսաւ իր աչքովը իր մայրերուն ու քոյրերուն բռնաբարումը, բայց կրցաւ իր բարոյականը անաղարտ պահել, որ այժմ կապականուի իր որդւոց ձեռքով. այո, այն բանը որ դարաւոր հալածանքներով ու բռնութեամբ չկրցաւ ընել արտաքին թշնամին, ներքինը կրցաւ յաջողցնել և պիտի կրնայ շուտով ի գլուխ հանել, ի մեծ դժբաղդութիւն և յամօթ ընդհանուր հայութեան:

Վստահ եղէք, թէ այս նոյն լեզուով է որ կը խօսիմ եկեղեցիներուն և լսարաններուն բեմէն և նոյն զգացումները կարտայայտեմ ամեն խօսակցութիւններուս մէջ, արթնցնելու համար այս թմրած ժողովուրդը և սիրտ տալու համար անոր, որ սարսափած և ընկճուած է վերև յիշատակուած պլան-պէքներու լուծին ներքև, որ աւելի ծանր կը ճնշէ անոր վրայ, քան Թիւրք երբեմնի կառավարութեան կամ քրդութեան լուծը. բայց դժբաղդաբար տակաւին ոչ մի շարժում տեսայ և ես միայնակ մնացեր եմ այս ահագին հոսանքին դէմ և ստիպուած դիմադրելու՝ ինձ դէմ ուղղուած պղտոր զէնքերուն: Այն վստահութիւնն ու յոյսերը, զոր ունէի Վան մտած ժամանակ, դժբաղդաբար ամենքն ալ ի դերև ելան և պիտի ստիպուիմ քիչ ատենէն տեղս տալու աւելի արժանաւորագունին և յաջողակին: Չեմ գիտեր թէ Աստուած օր մը պիտի տա՞յ ինծի երջանկութիւնը գէթ հեռուէն իմանալու թէ Վասպուրականի հայ ժողովուրդը ազատած է, յանուն յեղափոխութեան, իր վզին վրայ դրուած բռնութեան և ստրկութեան լուծէն:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 սեպտեմբերի

Թոյլ տուէք յայտնել «Մշակի» միջոցով, որ «Ընկերի» կամ նրա խմբագրի հետ որևէ գործ ունեցողները պիտի դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, редакція „Инкеръ", Седраку Тараянцъ (Гановская ул., № 9):

Ս. Թառայեանց

—

Էջմիածին, 14 սեպտ.

«Հորիզոն» լրագրի № 34-ում մի թղթակցութիւն կար գրված Շուշուց, ամսիս 8-ից, Տ. ստորագրութեամբ, որտեղ յօդուածագիրն ասում է, թէ մենք պատգամաւորներ չենք ընտրված հասարակութեան կողմից և թէ հասարակական ժողովում ընտրութիւն տեղի չէ ունեցել Շուշում, այլ միայն մի փոքրիկ խմբակ, բաղկացած 20—30 հոգուց, մեր նախաձեռնութեամբ կազմել է մի դռնփակ ժողով ընտրութեան համար ու յետոյ հաւաքել քաղաքացիներից մասնաւոր ստորագրութիւններ փողոցներում և որ ստորագրողներից շատերը հաւանական է, որ չը գիտենան ընտրութեան նպատակը, ուստի թղթակիցը բողոքում է հասարակութեան անունից (չը գիտենք ում լիազօրութեամբ) այդ ընտրութեան դէմ, որի միջոցով մենք իբր թէ թոյլ ենք տալիս մեզ շահագործելու հասարակութեան անունը:

Այդ գաղտագողի յօդուածը,—որը հաստատօրէն գիտենք, որ չէ գրված Շուշում ամսիս 8-ին, որովհետև «Մշակի» № 199-ում, որի վրա մատնացոյց է անում յօդուածագիրը, ստացվել է ամսիս 11-ին միայն, հետևապէս նա չէր կարող կարդալ այդ համարը ամսիս 8-ին,—ոչ այլ ինչ է, եթէ ոչ սատրիկ վախկոտութեան արդիւնք, որովհետև յօդուածագիրը գիտէ, որ մենք, բացի Կաթողիկոսի օծումը շնորհաւորելուց, ունենք և մի ուրիշ կարևոր միսիա:

Երկրորդ՝ մենք ընտրված ենք ոչ թէ միայն քաղաքացիների կողմից, այլ և Կ. Հ. Բար. Ընկ. Շուշու ճիւղի կողմից:

Երրորդ՝ մենք հասարակական ժողովում երկար ժամանակ հրաժարվում էինք պատգամաւորութիւն յանձն առնելուց և միայն նշանաւոր քաղաքացիների թախանձանօք եկանք Էջմիածին:

Չորրորդ՝ պատգամաւորութեան ծախքերի համար ընտրող հասարակութիւնը վճարել է 150 ր. ճանապարհածախս, ուրեմն հիմնովին սուտ է յօդուածագրի այն ասածը, թէ հաւանական է, որ ստորագրողներից շատերը չիմանան ընտրութեան նպատակը, քանի որ ստորագրողները տուած են նաև ճանապարհածախս, մի բան, որ չէր կարող անել քաղաքացին անգիտակցօրէն:

Լ. Վարազեան
Մ. Ղոնդաղսազեան

—

Շուլավէր, 17 սեպտեմբերի

«Հանդէս Ամսօրեայում» հրատարակվում են «Գրական դէմքեր» և «Ռուսահայոց նորագոյն բանաստեղծներ» վերնագրով իմ յօդուածները:

Յայտնում եմ ի գիտութիւն հետաքրքրվողների, որ իմ գրական պատմութիւնը բաղկացած է լինելու մի քանի հատորներից, որոնք կը ներկայացնեն հայ հեղինակների և բանաստեղծների կեանքը և գործունէութիւնը կենդանագրերով, կենսագրականներով, գրուածքների կարևոր բովանդակութեան ցուցադրումներով և քննադատական վերլուծումներով:

Առայժմ լոյս են տեսնելու երկու հատորիկ, առաջինը՝ «Գրական դէմքեր», որի մէջ տեղ են բռնելու հետևեալ գրողները՝ Իւրիյ Վեսելովսկի, Սմբատ Շահազիզ, Հ. Առաքելեան (Շահրիար), Շիրվանզադէ (Ալեքսանդր Մովսէսեան), Լէօ (Առաքել Բաբախանեան), Ա. Ահարոնեան և Վ. Փափազեան:

Երկրորդ հատորը՝ «Ռուսահայոց նորագոյն բանաստեղծները»,—Յովհ. Յովհաննիսեան, Ալ. Ծատուրեան, Յովհ. Թումանեան, Աւ. Իսահակեան, Յար. Թումանեան, Վ. Միրաքեան, Յ. Յակոբեան, Ռ. Անոփեան և Յ. Կոստանեան:

Լուսանկարները և կենսագրական տեղեկութիւնները յղել այս հասցէով. Шулаверы, Григорію Баласанянъ.

Գրիգոր Բալասանեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
21 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մինչև 1910 թ. սեպտեմբերի 4-ը երկարում է ուժեղացված պահպանողական դրութիւնը Կուրլեանդիայի, Լիֆլեանդիայի և Էստլանդիայի նահանգներում:

Պետերբուրգի քաղաքապետը 300 րուբլի տուգանք նշանակեց «Рѣчь»-ի խմբագիր Ելկինին՝ սեպտ. 18-ին տպված առաջնորդող յօդուածի համար և 1000 րուբլի «Новая Русь» լրագրի խմբագրին՝ «Բուրցեվի մերկացումների առիթով» յօդուածի համար:

Բարձրագոյնս հաստատվեց մինիստրների խորհրդի որոշումը հրէաներին միջնակարգ դպրոցներն ընդունելու կարգի մասին: Հրէաների ընդունելութեան թիւը պէտք է 5% լինի մայրաքաղաքի կրթական հաստատութիւնների ուսանողների ընդհանուր թւի հետ համեմատած, 10%—պետութեան միւս տեղերի ուսանողների թւի:

Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 38, մեռան 16:

1910 թւի ընթացքում ամբողջ պետութեան մէջ մտադրվում է կատարել անտառների հետազօտութեան, տնկման և բոնիֆգիայի աշխատանքներ 13,600,000 դեսեատին տարածութեան վրա:

Այսօր Պետական Դումայի անդամի ընտրութիւններին 86,000 ընտրողներից եկել էին 24,442-ը, մինչդեռ երրորդ Դումայի հիմնական ընտրութիւններին մասնակցում էին 44,922: Աբսենտէիզմը հասնում է 70%-ի, իսկ 1907 թւին նա 38 էր:

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՒ: 5 չարագործներ Բերեանսկի աւստրիական հիւպատոսից յափշտակեցին 8000 րուբլի:

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ: Ձերբակալված չարագործները, որոնք երէկ յարձակում գործեցին սպանդանոցի գրասենեակի վրա, մինը էլեքտրոտեխնիկ է, իսկ միւսը փականագործ:

ԲԼՈՒԱ: Ֆինանսների մինիստր Կօշէրին երէկ ներկայ էր գիմնաստիկա-մարմնամարզական միութեան մէջ տեղական երիտասարդութեանը պարգևատուութեան միջոցին և ճառ արտասանեց հակամիլիտարիզմի դէմ: Բանկետում նա խօսեց կառավարութեան ֆինանսական ծրագրի մասին և արդարացրեց պետական պաշտպանութեան համար ծախսած 280,000,000 ֆրանկը:

ՄԱՐՄԱՆԴ: Եկաւ Ֆալիէրը և ներկայ եղաւ նախկին մինիստր Ֆայի արձանի օծմանը: Հանդիսի ժամանակ այն ամբիոնը, որի վրա գտնվում էին իշխանութիւնները, թեթև երերվեց, որը առիթ ծառայեց իրարանցման: Սակայն դժբաղդութիւն չը պատահեց:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ: Բացվեց պարլամենտի հերթական նստաշրջանը: Ֆոլկէտինգը ընտրեց նախկին պրեզիդիումին:

ԲԵՐՆ: Այսօր բացվեց համաշխարհային պօստային միութեան արձանը: Ողջոյնի ճառ արտասանեց դաշնակցական խորհրդի անդամ Ֆորրէրը: Ճաշկերոյթին միութեան նախագահ բժիշկ Դէյխէրը խմեց պետութիւնների, կառավարութիւնների և ազգերի գլուխների բարօրութիւնների կենացը:

Կ. ՊՈԼԻՍ: Ռուսաց դեսպան Զարիկօվը թարգմանի և քարտուղարի ուղեկցութեամբ մեկնեց Լիվադիա:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Շ. Տէր-Նիկողայոսեանց
Վերադարձել է և վերսկսել հիւանդների ընդունելութիւնը:
Ամեն օր { առաւօտեան 9—3 ժամը
երեկոյեան 4—7 ժամը
Вельяминовская ул. № 14. верхній этажъ.
(հ. կ. հ.) 976. 3—1

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւնները:
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ.
5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի:
(օ. մ.) 100—18

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—19

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. ՑԷՑԼԻՆ
Ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւններ: Արհեստական ատամներ:
Ընդունել. առաւ. ժ. 9-ից—երեկ. ժ. 7-ը: Միքայէլեան պր. տ. № 22. (Անկիւն Սեմեօնովսկայա փ. № 3), մուտքը Սեմեօնովսկայա փողոցից:
(օ. մ.) 810. 100—14

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթթումն, դեղերի քսումն (втираніе) նայլն: Էլեկտրականութիւն ռէվմատիզմի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ: Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ: Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն: Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկներին: Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ: Ընդունելութիւնը 4—5 ժամը: Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ:
(օ. մ.) 857. 0—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
„ԴԱՍԸՆԿԵՐ"
Առաջին տարվայ այբբենարան-ընթերցարան
ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
Զարդարված գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին
ԿԱԶՄԵՑԻՆ՝
Արշակ Զիլինկարեան և Տիգրան Ռաշմաճեան
Աշխատակցութեամբ Աւ. Իսահակեանի
ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կոպէկ
✦ Գրախանութներին զեղչ 25% ✦
Գումարով առնողներին 20% զեղչ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում (Թիֆլիս):
(չ. ու. շ.) 948. 10—4

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!
2 ր. 75 կ.:

Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» չէվիօտը, 4¼ արշ., տղամարդկանց հագուստի համար: Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է: Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ծխագոյն: Ճանապարհածախքը 55 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին: Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО", г. Лодзь, № 15.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզւով:
(չ. կ.) (В. 58110) 947. 0—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են

Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.:
(Alto) Երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 1 ր. 50 կ.:
(Basso) Երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 2 ր.:
(Soprano) Երգեցողութիւն ս. պատ. վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.:
(Tenore) Երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.:
Դիմել՝ Въ Тифлисъ. Центральной книжной торговлѣ. 854 (չ.) 10—5

Լոյս է տեսել
Ն. Դոլէն եւ Ա. Խաչ.-ի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
Դիմել՝ «Գուտտեմբերգին»: Գինը 50 կ., 156 եր.: (շ. չ.) 960. 6—2

Ջրաբերդի Մաղաւուզ գիւղում նորերս վախճանված տիրուհի
ՀՌԻՓՍԻՄԷ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
ժառանգները և հարսները, այն է՝ տէր-Սարգիս քահ., Զալալ, Զումրուդ և Միքայէլ Տէր-Գրիգորեանները, Զագա Շամամեանը, Սանամ, Երանուհի, Մարկ. Գրաֆինէ և Զաբել Տէր-Գրիգորեանները շնորհակալութիւն են յայտնում այն բազմաթիւ Ջրաբերդցի և օտարաբնակ ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, որոնք պատւեցին իրանց բազմերախտ մօր յիշատակը անձամբ և նամակներով:
974. 1—1

ԳՕՐՈՒ հայոց ծխական ուսումնարանի համար
հարկաւոր է
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
ձեռագործի 4 դասով, և նախակրթարանում հայոց լեզուից և թւաբանութիւնից՝ 11 դասով: Ռոճիկ տարեկան 240 րուբլի:
Ցանկացողները թող դիմեն՝ Гор. Горы, Попечительству Армянской школы.
(ե. չ.) 970. 2—2

ԾԱԽՎՈՒՄ Է
ՏՂԱՄԱՐԴՈՒ
ԱՐԺԷՔԱՒՈՐ — ՄՈՒՇՏԱԿ
Բոլշեվսկայա, 15, ներքևի յարկ:
(ե. չ.) 972. 2—2

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ (արխիտեկտոր)
Հ. Յ. Կարապետեանց
Տեղափոխվել է Աւճալսկայա փող., № 9, տ. Տէր-Գաբրիէլեանի: Ընդունում է կէսօրից յետոյ 4—7 ժամը:
953. 10—5

* * *

„Իրազննական դասեր"
Գինն է 1 ռուբ.
Ցանկացողը պատուէր կարող է ուղարկել ինձ պօստի բացիկով (Почтамтъ, К. Ягубьяну—հասցնել Ս. Մանդինեանին):
Քաղաքումս գումարով առնողը ստանում է 10% զեղչ:
Դրսի համար պայմանները մնում են նոյն, ինչ որ առաջ յայտարարել էի (20, 25 և 30%): Միայն հատով պատուիրողը ճանապարհածախս չէ վճարում:
Սեդրաք Մանդինեան
(օ. մ.) 866. 10—10

Դվորցօվայա փողոցի վրա, վրաց ազնուական. շինութեան մէջ
ՄԱՍՆԱՒՈՐ ԱԶՈՒՐԴԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
բացված է
ՓՈԽԱՏՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
շարժական կայքեր գրաւ դնելու համար: Օպերացիաները տեղի կունենան առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը ցեր., բացի տօն օրերից:
(օ. մ.) 977. 5—1

ՕՐ. ՎԱՐՎԱՌԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ
ՂԱԶԱՐԵԱՆՑԻ
բնակութեան տեղն իմացողներից խնդրում ենք յայտնել Самара Х. Г. Кеворковъ-ին: Օրիորդը Երևանի նահանգի Ղարախանբայլու գիւղի բնակիչ Յովսէփ Ղազարեանցի աղջիկն է, որը 2 տարի առաջ ապրում էր Արմաւիրում:
(ա. օ.) 978. 5—1

ՁԿՆԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ **Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ** ԽԱՆՈՒԹՈՒՄ
Պուշկինսկայա փող., տ. Սունդուկեանցի № 23, ռուսաց սեմինարիայի հանդէպ

ՏԵԼԷՖՈՆ № 395



ՏԵԼԷՖՈՆ № 395

Ամեն օր անընդհատ ստացվում են օսէտրինա, սէվրիւգա, լասօսինա և հատիկաւոր խաւեար, նոյնպէս և ձկնեղէն-մթերքներ: Վաճառվում են բարեխիղճ գներով:
Յարգանօք՝ Ս. Ղուկասեան
(օ. մ.) 919. 20—7

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ: Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն): Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.:

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր:

→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում:
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(օ. մ.) 774. 20—16

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.